Azg
Ազգ
20 ՆՈՅԵՄԲԵՐ 2004 ՇԱԲԱԹ 208 (3139)

Եթե Ադրբեջանը խաղաղություն է ուզում, ապա ուղղակի կբանակցեր Ղարաբաղի հետ

ԼՂՀ նախագահը Միչիգանի համալսարանում նոյեմբերի 18-ին դասախոսական կազմի եւ ուսանողների հետ հանդիպմանն անդրադարձել է ղարաբաղյան հակամարտությանը: Արկադի Ղուկասյանն ասել է, որ պատճառնական Ստեփանակերտը՝ կողմնակից է Ադրբեջանի հետ խնդիրը լուծելու բացառապես խաղաղ ճանապարհով՝ ի տարբերություն Ադրբեջանի, որը փորձում է խնդիրը լուծել ռազմական ուժի գործադրմամբ: «Եթե Ադրբեջանը լրջորեն պատրաստ լիներ խաղաղության, նա ուղղակի բանակցությունների մեջ կմտներ Լեռնային Ղարաբաղի հետ», ասել է Ղուկասյանը:

Դեպրոյթում տեղի հայ համայնքի հետ հանդիպմանը Ղուկասյանն ասել է. «Եթե Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ավտոմայրուղին Ղարաբաղի համար կյանքի ճանապարհ է, ապա կառուցվող «Հյուսիս-հարավը» կդառնա Ղարաբաղի տնտեսական զարգացման ամենակարեւոր բաղկացուցիչներից մեկը»:

26-ական տարվա ազատազրկման դատապարտ 6 հայ օդաչուների համար

Վերջնական դատավճիռն ընթերցվելու է նոյեմբերի 26-ին

ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Հասարակածային Գվինեայի պետական մեղադրող, դատախազ Խոսե Օլո Օբոնոն նոյեմբերի 18-ին Մալաբոյի դատարանից պահանջել է 26 տարվա ազատազրկման դատապարտել Հայաստանի քաղաքացի 6 օդաչուների, ովքեր մեղադրվում են Կենտրոնական Աֆրիկայի արեւմուտքում գտնվող բոնատիրական այս երկրում պետական հեղաբերման փորձ իրականացնելու մեջ:

Օդանավի հրամանատար Ասոս Կարապետյանը, ղեկավար Սամվել Մաճկալյանը, բորտմեխանիկ Ռազմիկ Խաչատրյանը, երկրորդ օդաչու Սամվել Դարբինյանը եւ անձնակազմի եւ երկու անդամներ ձերբակալվել եւ մարտի 8-ից պահվում են մայրաքաղաք Մալաբոյի տխրահռչակ «Սեւ լողափ» բանտում: Հայ օդաչուների դատապաշտպան Պոնսիանո Մբոմբո Նվոն հիմնավորապես հերքել է մեղադրանքները՝ դրանք համարելով հիմնազուրկ եւ անհեթեթ ու հայտարարել, թե անարդար վճռի դեմքում պայքարելու է մինչեւ վերջ՝ ընդհուպ միջազգային դատական ատյաններ: 6 հայ օդաչուները Հասարակածային Գվինեա էին մեկնել այս տարվա հունվարին եւ գերմանական մի ընկերության հետ պայմանագրային կարգով պետք է թռիչքներ իրականացնեին այս երկրում: Փաստորեն, հայ օդաչուները ձերբակալվել են առաջին իսկ թռիչքն իրականացնելուց հետո:

Տես էջ 3

Գլխավոր մեղադրյալ Նիկ դյու Տուա

Մարկ Թեչերը մեղադրվում է հեղաբերման փորձը ֆինանսավորելու մեջ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՀԱՎԱՔՈՒՄ

«ԱՄՆ-ը միակ երկիրն է, որը պետական մակարդակով օգնում է Ղարաբաղին»

ԼՂՀ վարչապետն արտասահմանյան մի շարք երկրների երիտասարդական կազմակերպությունների հետ հանդիպմանն ընդգծել է, որ ԱՄՆ-ը միակ երկիրն է, որը պետական մակարդակով օգնում է Ղարաբաղին: Ամերիկյան մարդասիրական օգնության հիմնական մասն ուղղվում է ղարաբաղյան պատերազմի տարիներին ավերված բնակավայրերի եւ կենսական նշանակության օբյեկտների վերականգնմանը:

Անուշավան Դանիելյանն, ըստ «Ռեգնում» գործակալության, ասել է, որ արտասահմանյան ներդրումները Ղարաբաղի տնտեսության մեջ վերջին հինգ տարիներին մոտենում են 50 մլն ԱՄՆ դոլարի: Դանիելյանը ցավով նշել է, որ Ադրբեջանի երիտասարդության ներկայացուցիչները չեն ժամանել Ստեփանակերտ: «Ադրբեջանի հետ խնդիրները մենք պարտավոր ենք կարգավորել բոլոր մակարդակներում, այդ թվում նաեւ ժողովրդական դիվանագիտության օգնությամբ՝ երիտասարդությանը ներգրավելով», ասել է նա:

Տես նաեւ էջ 3

Ռուսաստան-Հայաստան երկաթուղին կարող է բացվել 2005 թ. վերջին

Ռուսաստան-Հայաստան ուղիղ երկաթուղային հաղորդակցությունը կարող է բացվել մեկ տարի հետո: Ինչպես հաղորդում է «Մեդիամաքս» գործակալությունը, այդ մասին երեկ Մոսկվայում հայտնել է Ռուսաստանի երկաթուղային տրանսպորտի դաշնային գործակալության ղեկավար Միխայիլ Ակուլովը: «Ռուսաստանից Թբիլիսի, այնուհետեւ Երեւան, իսկ հետո Ադրբեջան ուղիղ հաղորդակցություն սկսելու համար իրական ժամկետը մեկ տարի է», հայտարարել է նա: Ակուլովի խոսքերով, ուղիղ հաղորդակցության բացմանը վերաբերող քաղաքական հարցերը լուծվել են Ռուսաստանի տրանսպորտի նախարար Իգոր Լեւիտինի՝ անդրկովկասյան երկրներ այցելության ժամանակ: Նա նաեւ հայտնել է, որ մոտ օրերս կստեղծվի Աբխազիայի տարածքով Ռուսաստանի եւ Վրաստանի երկաթուղային հաղորդակցության վերականգնման հարցերով եռակողմ աշխատանքային խումբ:

Իլհամ Ալիեւը ԵԱՀԿ-ին մեղադրել է երկակի չափանիշների քաղաքականություն վարելու մեջ

Ադրբեջանի նախագահը Թուրքիայի պետնախարար Քյուրշադ Թուզմենի հետ հանդիպմանն իր երախտագիտությունն է հայտնել Թուրքիային՝ հայ-ադրբեջանական հակամարտության հարցում վերջինիս դիրքորոշման համար, հաղորդում է «525 գազեթ» պարբերականը:

Իլհամ Ալիեւն ընդգծել է, որ Ադրբեջանը վերականգնելու է իր տարածքային ամբողջականությունը, իսկ ղարաբաղյան հակամարտության կարգավորման մեջ ուղղակիորեն ներգրավված կազմակերպությանը՝ ԵԱՀԿ-ին, հորդորել է «խնդրի հանդեպ դրսեւորել արդարացի մոտեցում եւ վերջ տալ երկակի չափանիշներին»:

Համաձայնագիրը վերջ կդնի՞ Սուդանի քաղաքացիական պատերազմին

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ 15 երկրների դեսպանների ներկայությամբ երեկ Քենիայի մայրաքաղաք Նայրոբիում ստորագրվեց խաղաղության համաձայնագիր Սուդանի հակամարտող երկու կողմերի՝ հյուսիսցիների եւ հարավցիների միջեւ: Ստորագրման արարողությունից հետո երկու կողմերի ղեկավարները խոստացան հարգել ՄԱԿ-ի միջնորդությամբ կայացած համաձայնությունը եւ վերջ տալ 21 տարի շարունակ երկիրը բաղում արյունահեղություններ ու սովի մատնած հակամարտությանը:

Հիշեցնենք, որ անցնող 2 տասնամյակում Սուդանում միլիոնավոր մարդիկ են զոհվել ցեղասպանական արարքների, ահաբեկչությունների եւ դրանց արդյունքում երկրում մոլեգնած սովի հետեւանքով:

Ձերբակալվեց Հայաստանում եւ հանձնվեց ԱՄՆ-ին

2000 թվականին ԱՄՆ ոստիկանությունը եւ հետաքննությունների դաշնային բյուրոն հետախուզում էին հայտարարել ԱՄՆ քաղաքացի, Լոս Անջելեսի բնակիչ, 32-ամյա Շահեն Քեչիշյանի նկատմամբ, որը մեղադրվում էր դիտավորյալ սպանության եւ դեղերի վայրից փախուստի դիմելու ծանրագույն հանցագործությունների մեջ: Վերջերս ՀՀ ԱԱԾ մարմինների օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Շ. Քեչիշյանը, որը 2002 թ. կեղծ փաստաթղթերով մուտք էր գործել ՀՀ տարածք, հայտնաբերվել, ձերբակալվել եւ, համաձայն երկկողմ պայմանավորվածությունների, հանձնվել է ԱՄՆ իրավապահ մարմիններին:

ՀՀ ԱԱԾ ՄԱՄՈՒԼԻ ԿԵՆՏՐՈՆ

Բաքվում ակնհայտորեն գոհ են Աքկինսոնի զեկույցից

Բաքվի թերթերը երեկ իրենց համարներում ակնհայտ գոհունակությամբ են պատմել նոյեմբերի 17-ին Փարիզում տեղի ունեցած ԵԽԽՎ քաղաքական հարցերով հանձնաժողովի նիստի մասին, որտեղ ներկայացվել է Ղարաբաղի հարցով ԵԽԽՎ զեկուցող Դեւիդ Աքկինսոնի զեկույցը: «Ազերթաջ» պետական լրատվական գործակալությանը տված հարցազրույցում ԵԽԽՎ Ադրբեջանի պատվիրակության ղեկավար Սամեդ Սեիդովն ասել է, որ ադրբեջանական կողմի ներկայացրած 15 առաջարկությունների մեծ մասն ընդունվել է: Քանի դեռ մեր տրամադրության տակ չկա Աքկինսոնի զեկույցը, դժվար է ասել, թե նախնական տեքստում Ադրբեջանի համար նպաստավոր ինչ փոփոխություններ են արվել: Հիշեցնենք, որ հայկական կողմի 5 առաջարկություններից ընդունվել է միայն 2-ը:

Այաթոլլա Ալի Խամենեին դիմում է իսլամական աշխարհին

Ֆալլուջայի մզկիթներից մեկում վիրավոր եւ անզեն իրաքցու գնդակահարման առաջացրած զայրույթն ու վրդովմունքը շարունակում են հետզհետե ծավալվել աշխարհով մեկ: Դրա վառ ապացույցը Իրանի Իսլամական Հանրապետության հեղափոխության առաջնորդ Այաթոլլահ Ալի Խամենեիի իսլամական աշխարհին ուղղված բողոքարկման կոչն է:

Թուրքական «Ենի շաֆակ» թերթի նոյեմբերի 19-ի համարի տվյալներով, Այաթոլլա Խամենեին Իրանի պետական հեռառաստեսությամբ Ֆալլուջայում իրագործված հանցագործությունների համար դատապարտել է ամերիկացի զինվորներին, ապա եւ դիմել իսլամական աշխարհին՝ ասելով. «Խաղաղ բնակիչների, կանանց, երեխաների, վիրավորների սպանությունները, տների, մզկիթների եւ այլ աղոթավայրերի ավերումը մտահոգում է յուրաքանչյուր մահմեդականի»:

Նա իր հեռուստաելույթով «անհավաս» է որակել ամերիկյան զինվորներին եւ, ըստ թուրքական թերթի, ընդգծել է, որ վերջիններս պատրաստվում են Ֆալլուջայում կատարած չարագործությունները իրագործել նաեւ Սամարայում, Բաղդադում եւ Մոսուլում: Իսլամական հեղափոխության առաջնորդն ամերիկացիների հանցագործությունները կանխելու համար միջոցներ ձեռնարկելու կոչ է արել մահմեդական երկրների կառավարություններին:

Հ. Ց.

Մոլագարը շարունակում է զվարճանալ

Կեղծ ահազանգ Չեխովի դպրոցում

ԿԱՐԻՆԵ ՊԱՌԻԵՎԱՆ

Երեկ առավոտյան Երեւանի Չեխովի անվան դպրոցում ամենահիսկական խուճապ էր: Բաղրամյան պողոտայով հուզված վեր ու վար էին անում դպրոցականների, ծնողների, ուսուցիչների խմբեր: Մայթեզրերին շտապ օգնության ու ոստիկանական մեքենաներ էին կանգնած: Կարմիր բերետավոր ոստիկանները հերթապահում էին դպրոցի մուտքի մոտ՝ մոտ չթողնելով ոչ մեկին: Իրար էին խառնվել նաեւ հարեւանությամբ գտնվող ԱՄՆ դեսպանատան անվտանգության ծառայողները:

Առավոտյան ժամը 10.30-ին զանգահարել էին դպրոց եւ «տեղեկացրել», որ դպրոցում ռումբ է տեղադրված, ուր որ է պայթելու է: Կես ժամ հետո ոստիկանների օգնությամբ բոլորը տեղահանվել էին շենքից:

Շտաբը լուրջ չէին ընդունում լուրը, եւ Բաղրամյան պողոտայում կատարվելիքին (ի դեմ, այստեղ երկար ժամանակ խցանվել էր նաեւ երթեւեկությունը) հետեւում էին ինչպես զվարճալի բեմականացման: Բայց ծնողների ու աշակերտների մեջ կային նաեւ նյարդային հուզումների մեջ ընկածները, ոմանք տագնապահար փնտրում էին իրենց երեխաներին: 1 ժամ հետո խուզարկու շների օգնությամբ հաստատվեց, որ ահազանգը կեղծ էր:

Տես էջ 2

ԸՆԹԱՑԻԿ

ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովում 3 կետով Հայաստանն արժանացել է դրական գնահատականի

Հայաստանը մասնակցելու է Քաֆկում կայանալիք սեմինարին

Նոյեմբերի 11-17-ը Վենետիկում տեղի ունեցած ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովին Հայաստանը մասնակցել է երեք պատվիրակներով՝ Մհեր Շահգելդյան, Ալեխան Կարապետյան, Արթուր Պետրոսյան: Երեկ պատվիրակության երկու ներկայացուցիչները (Շահգելդյան, Կարապետյան) ասուլիս էին հրավիրել խորհրդարանում եւ փաստեցին, որ կարողացել են բավական ակտիվորեն մասնակցել վեհաժողովի աշխատանքներին: **Շահգելդյանի** հավաստմամբ, անհրաժեշտ աջակցություն են ստացել Գերմանիայի եւ Բրյուսելի հայկական դեսպանություններից, իսկ Իտալիայում Հայաստանի դեսպանատունը որեւէ կերպ չի համագործակցել խորհրդարանական պատվիրակության հետ: **Ալեխան Կարապետյանը** պնդեց, որ իրենք այնտեղ դիվանագիտական աշխատանք ընդհանրապես չտեսան, մինչդեռ Ադրբեջանի պատվիրակությունը հնարավորինս պատրաստված էր: Ոչ այնքան պատրաստված հայկական պատվիրակությունն ամեն դեպքում նախագահողի խոսքում Հայաստանին առնչվող մի քանի դրական գնահատականի է ականջալուր եղել: Սահմանադրական բարեփոխումները, ընտանեկան օրենսգրքի առումով եւ լրատվամիջոցներում քաղաքական տարբեր թեւերի հավասարաչափ արտահայտվածության տեսանկյունից Հայաստանը բարձր գնահատական է ստացել հատկապես Ադրբեջանի համեմատությամբ: Վերջին փաստն ուրախությամբ նշելով՝ Ալեխան Կարապետյանը չմոռացավ ընդգծել, որ Արտաշես Գեղամյանին եթեր չի տրամադրվում:

Ալեխան Կարապետյանը գտնում է նաեւ, որ գրկաբաց դեպի ՆԱՏՕ գնացող Ադրբեջանի եւ Վրաստանի համեմատությամբ նշված կառույցում Հայաստանի դիրքերն ավելի թույլ են եւ առանց Միացյալ Նահանգների աջակցության մեր երկիրը մեծ հաջողություններ չի կարող արձանագրել: Մհեր Շահգելդյանը կոչ արեց չմոռանալ, որ ՆԱՏՕ-ի հնագույն եւ վստահելի անդամ Թուրքիան մեծապես աջակցում է Ադրբեջանին: Իսկ Հայաստանի եւ ՆԱՏՕ-ի հարաբերությունները, Շահգելդյանի գնահատմամբ, գտնվում են նոր փուլում: Գնահատականը տվեց անհատական ծրագիր կազմելու համատեքստում:

ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովում ներկայացված Հարավային Կովկասի վերաբերյալ զեկույցի ավարտում, բայց վերջնական չլինելն էլ հայ պատվիրակներին թույլ կտա դեռ որոշակի աշխատանքներ իրականացնել ձեւակերպումները Հայաստանի համար ավելի շահեկան դարձնելու: Այս անգամ էլ, սակայն, լեզվի խնդիր կա, որն էլ իր հերթին նպաստում է ոչ շահեկան ձեւակերպումների առկայությանը զեկույցում: Ֆրանսերենում, օրինակ, տեղահանված անձինք եւ փախստականներն արտահայտվում են մեկ բառով:

Լեզվի խնդիր համարվեց նաեւ գրավյալ թե վերահսկվող տարածքներ արտահայտությունը: Հայաստանի ներկայացուցիչներն անհրաժեշտ բոլոր առաջարկությունները խորհրդարանական վեհաժողովում արել են նաեւ Շահումյանի եւ Գետաշենի առնչությամբ: Վեհաժողովի ընթացքում Ֆրանսիայի ներկայացուցիչը բարձրացրել է հայ-թուրքական սահմանի, Լիսվայի ներկայացուցիչը՝ հայոց ցեղասպանության հարցը: Բանախոսներն ավելի մանրակրկիտ տեղեկություն խոստացան նոյեմբերի 25-27-ը Բաքվում կայանալիք ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի «Rose Road» (Վարդերի ճանապարհ) սեմինարից հետո, որին Հայաստանը նույնպես պետք է մասնակցի եւ, ինչպես մյուս բոլոր երկրների ներկայացուցիչները, վիզաները կստանա տեղում, ինչպես հավաստիացրել է ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի ղեկավարությունը: Անվտանգության խնդիրը, Մհեր Շահգելդյանի կարծիքով, ապահովելու է ադրբեջանական կողմը: Հայկական կողմն իր հերթին փորձել է կանխարգելել մասնակցության բոլոր խոչընդոտները:

Բաքվում կայանալիք սեմինարում քննարկվելիք թեմաները լինելու են տարաբնույթ, կարեւորագույններն են՝ Հարավային Կովկասի անվտանգության համակարգը, Կասպից ծովի պաշարների կառավարումը եւ առկայությունը: 2006 թ. Հայաստանում տեղի կունենան ՆԱՏՕ-ի զորավարժությունները եւ հաջորդ սեմինարը:

ԼԵՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ուսանողական հետազոտության հետքերով

Երեկ Երեւանի պետական բժշկական համալսարանը մամուլի ասուլիս էր հրավիրել, որի շարժառիթը մի քանի օր առաջ ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության հրապարակած սոցիոլոգիական հարցման արդյունքներն էին՝ ՀՀ պետական բուհերում կոռուպցիայի մակարդակի վերաբերյալ: Ըստ այդ ուսումնասիրության՝ պետական բուհերից ամենից կոռումպացվածը Երեւանի պետական բժշկական համալսարանն էր, որի ուսանողների 72 տոկոսի կարծիքով իրենց բուհում կոռուպցիա միշտ եղել է եւ կլինի: «Բժշկական համալսարանի ղեկավարությունը, ուսանողությունը շատ լավ գիտակցում են, որ կաշառակերություն կա, եւ վարչակազմը բազմաթիվ միջոցառումներով փորձում է դա դեմն առնել, ասաց բուհի ռեկտորի օգնական **Արմեն Ատոյանը**: Մասնավորապես՝ արդեն հինգ տարի սոցիոլոգիական անանուն հարցումներ ենք անցկացնում, որոնց հիման վրա էլ պատկերացում ենք կազմում այս կամ այն դասախոսի նկատմամբ ուսանողների վերաբերմունքի մասին: Վերջին 4 տարիներին ուսանողների կարծիքները հաշվի առնելով, բուհում չեն վերընտրվել մեկ դեկան, երեք ամբիոնի վարիչ, չորս պրոֆեսոր, բազմաթիվ միջին եւ մանր աշխատակազմի աշխատողներ»: Սակայն նա գտնում է, որ կաշառակերությունը համընդհանուր երեւույթ է, եւ հարկավոր է ոչ թե կենտրոնանալ այս կամ այն կառույցի վրա, այլ համակարգային պայքար ծավալել: «Սոցիոլոգիական հարցման կազմակերպիչներն էլ են խոստովանում, որ սա սիրողական մակարդակով կատարված աշխատանք է, ասաց Ատոյանը, այստեղ չեն ապահովվել սոց. հարցման տարական կանոնները՝ ընտրանքի ապահովում, արդյունքների ճշգրիտ վերամշակում եւ այլն: Այս պարագայում նման հայտարարություններ անելը պարզապես անպատասխանատու եմ համարում»:

Ասուլիսին մասնակցում էին նաեւ Գյուղատնտեսական ակադեմիայի եւ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսանողական խորհուրդների նախագահները: Այս բուհերն ըստ հետազոտության ունեին կոռումպացվածության համապատասխանաբար 67 եւ 65 տոկոս: Նրանք իրենց զարմանքն արտահայտեցին ուսանողական միության այս նախաձեռնության վերաբերյալ, քանի որ իրենց բուհերում սովորող «Նիկոլ Աղբալյանի» անդամները երբեք այդ հարցը բուհում չեն բարձրացրել:

Արմեն Ատոյանը, որ նաեւ ՀՀԿ երիտասարդական կազմակերպության նախագահն է, ասաց, որ վերջին շրջանում համագործակցում են «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության հետ, այս իմաստով երեւույթին քաղաքական ենթատեքստ տալ չի կարելի: Արմեն Ատոյանը ուսանողական միության այս քայլը դիտում է նաեւ իբրեւ ավագ դասընկերների՝ հակակոռուպցիոն պայքարի դրոշակակրի իմիջը սանձելու փորձերի մի մաս:

Սակայն, ըստ նրա, կա նաեւ խնդրի մյուս կողմը. «Մեզ հայտնի է, որ որոշ ոչ պետական բժշկական ուսումնական հաստատություններ, մասնավորապես «Հայբուսակ» համալսարանը, օգտվում են ՀՅԴ-ի հովանավորությունից, եւ մեր բուհի վերաբերյալ նման թվերի հայտարարման հիմքում մասնավոր բուհերի շահագրգռվածությունն ենք տեսնում, ասաց Արմեն Ատոյանը: Այս իմաստով բժշկականին ամենից կոռումպացված բուհ հայտարարելը պատվեր եմ համարում»:

Ռեկտորի օգնականը բուհի անունից պատասխանություն հայտնեց բոլոր շահագրգիռ կողմերի հետ սոցիոլոգիական անկախ կազմակերպության միջոցով լուրջ հետազոտություն իրականացնել եւ վճարել անհրաժեշտ գումարի կեսը, միայն մեկ պայմանով՝ պետք է հետազոտվեն հանրապետության բոլոր պետական եւ մասնավոր բուհերը:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

«ԱՐՄԵՆՏԵԼԻ» ԽՆԴԻՐ

Արշակ Սադոյանը երդվել է չցուցադրել տեսագրությունները

Դրանք մարդկանց կյանքեր կարժենան

Երեկ խորհրդարանում Արշակ Սադոյանն ասուլիս էր հրավիրել: Նպատակը, ՕՏԕ-ի հայաստանյան գործունեության պատմությունը ներկայացնելով, «ապատեղեկացված» լրագրողներիս խաբված չլինելու իրավունքից օգտվելու հնարավորություն տալն էր: Արշակ Սադոյանն ասուլիսին ներկայացել էր չորս թղթապանակ փաստաթղթերով (դա նրա ձեռքի տակ եղած «Արմենտելին» առնչվող փաստաթղթերի ամբողջությունը չէ), սակայն ասելիքում նորություն չկար: Ասելիքի առանցքը եւս մեկ անգամ դարձավ այն, որ ներդրումների չկատարման պատճառով 120 մլն, հարկային պարտավորությունների թերակատարմամբ ՕՏԕ-ն 50 մլն դոլարի վնաս է հասցրել Հայաստանի Հանրապետությանը: Իսկ որպես ապացույց փաստվող տեսա եւ ձայնագրությունները, պարզվում է, կարճ ժամանակով անհետացել են այն սեյֆից, որտեղ պահվում են, այնուհետեւ հայտնվել նույն տեղում: Անհետացման ժամանակը համընկել է դրանք հրապարակելու արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի հորդորներին: Սակայն առանց դրա էլ Արշակ Սադոյանը չի պատրաստվում ցուցադրել տեսագրությունները, քանի որ այդպիսով կվտանգի այն անձանց կյանքը, ովքեր իրեն հայտնել են 5 կամ 7 միլիոնի կաշառատվության փաստը: Ի դեպ, այս ամենի մասին Արշակ Սադոյանին տեղեկացնողները դեռեւս պահպանել են ազնվությունն ու պարզապես մտահոգ են հայրենիքի բարությամբ: Մինչդեռ ՀՀ կառավարության որոշ անդամներ զբաղված են «Արմենտելին» կթելով: Ինչի մասին սուրճի սեղանի շուրջ Արշակ Սադոյանին տեղեկացրել են «Արմենտելի» ղեկավարները: Վերջիններս, սակայն, կառավարության հետ հարաբերությունները չփչացնելու մտավախությունից նույնը չեն փաստի հրապարակով:

Ու քանի որ Սադոյանը հավաստած է, որ կառավարությունը չի շեղվի ազգադավ ուղուց, ապա IP հեռախոսակապի 25 ընկերությունները կդիմեն միջազգային կազմակերպությունների, ավելի համարձակները՝ Եվրոպական դատարան, եւ ՀՀ կառավարությունում շատ արագ կհասկանան, որ իրենց որոշումն ավելի մեծ վնաս, քան օգուտ կբերի հենց իրենց:

Ն. Պ.

Հ. Գ. Ասուլիսին ներկայանալիս խորհրդարանի միջանցքում Արշակ Սադոյանին տեղեկացրել էին, որ արդեն շրջանառվում է նրա ձայնի նմանակմամբ բազմահարկ հայհոյանքների հեռախոսային հաղորդագրության ծրագիր: Սրան եւ հյուրանոց ունենալու լուրին Սադոյանը ծիծաղով վերաբերվեց:

Մոլագարը շարունակում է զվարճանալ

1-ին էջից

Ընդամենը մի շաբաթ առաջ նման բնույթի ահազանգ հնչեց երկրաշարժի վերաբերյալ: Հավանաբար, Հայաստանում մեծանում է հոգեկան անոմալիայի նոր տեսակով՝ ինֆորմացիոն ահաբեկչության մոլուցքով տառապողների թիվը: Մոլագարության այս արտահայտությունը նորություն չէ, եւ նախորդ տարիներին եւս նույն սցենարով նման դեպքեր արձանագրվել են, եթե հիշում եք՝ մերթ «Նաիրի» կինոթատրոնում, մերթ պետհամալսարանում իբր տեղադրված ռումբերի վերաբերյալ:

Խուլիգանական այս արարքներն էլ հասարակական կարգի, մեղմ ասած, կոպիտ խախտումներ են: Սակայն հասարակության առօրյան իսկապես խաթարող մոլագարին պատժելու ու գտնելու հավանականությունն այնքան էլ մեծ չէ:

ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի հանձնաժողովի նախագահ Մհեր Շահգելդյանը իրողության հիմքում տեսնում է անհեթեթ դրդապատճառներ՝ քննությունից խուսափելու, ընկերուհուն դասից հանելու համար երիտասարդները դիմում են նման հիմարությունների: Համենայն դեպս, այդպիսի եզրահանգումների են եկել նախորդ տարիների դեպքերի հետաքննությունից հետո:

Մեկ շաբաթ առաջ երկրաշարժի կեղծ ահազանգի մեղավորը դեռեւս չի բացահայտվել, բայց Մհեր Շահգելդյանը հավաստեց, որ այդ նպատակով էլ աշխատանքներ իրականացվում են:

«Նման իրողությունները շատ արագ հայտնաբերել հնարավոր չէ, եթե մենք փորձենք հետեւել կամ լսել բոլոր հեռախոսազանգերը, դա կնշանակի, որ պետք է տոպալ երկրում: Դա մարդու իրավունքների խախտում է:

Կա օրենք, որը նշում է, թե հեռախոսային որ խոսակցությունները կարող են լսվել: Օպերատիվ հետախուզական ծառայության օրենքը քննարկում է նաեւ այդ կարգի հարցերը, թե դատարանի թույլտվությամբ կամ առանց դրա որ հեռախոսները կարելի է լսել: Բայց խնդիրը լուրջ է, եւ նման կեղծ լուրեր տարածողները պետք է գտնվեն ու պատժվեն: Եթե շատ են խոսում նման դեպքերի մասին, մի խելագարի մտքով մի օր էլ կարող է անցնել իսկապես նման բան անել: Հարկավոր է պայքարի մեխանիզմներն ավելացնել, ընդհանրապես ելնելով նաեւ ամբողջ աշխարհում ահաբեկչության զարգացումից ու տարածաշրջանային բարդ վիճակից: Մենք շուտով ահաբեկչության դեմ պայքարի օրենքն էլ կընդունենք»:

Հասարակությանն անընդհատ լարվածության մեջ պահելու ցանկությունը կարող է նաեւ քաղաքական դրդապատճառներ ունենալ, բայց նկատի առնելով ներքաղաքական ֆլորայի ճահճային հանդարտությունը, ավելի հավանական է, որ մոլագարն է շարունակում զվարճանալ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ / հեռ. 581841
Հասցեագրվ. ծառայություն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Հասցեագրային շարասյուն
«Ազգ» թերթ
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Մեկնաբանություն

Ադրբեջանցիները կեղծիքի մեջ մեղադրում են հայկական աղբյուրներին

Թերեւս նրանք «մոռանում» են, որ այդ աղբյուրները թուրքական սկզբնաղբյուր ունեն

Ադրբեջանի եւ Բուլղարիայի ազգային հավաքականների նոյեմբերի 17-ին կայացած ընկերական հանդիպումը լուսաբանելու համար բուլղարացի ֆուտբոլիստների հետ նույն ինքնաթիռով Բաքու էր ուղեւորվել բուլղարական «24 ժամ» թերթի սպորտային բաժնի ղեկավար Էդուարդ Փափազյանը: Սակայն «Բինա» օդանավակայանում Ադրբեջանի անվտանգության ծառայությունները պաշտառաբանելով, թե նա հայ է, արգելել էին նրա մուտքը երկիր, ապա նստեցրել էին նույն ինքնաթիռը եւ արտախսել:

Թվում էր, թե սպորտն ազգայնամոլության, իսկ ազգայնամոլությունը հայատյացության դրսեւորման միջոց դարձնելու այս տգեղ արարքի համար Ադրբեջանի իշխանությունները պաշտոնապես ներողություն կխնդրեն Բուլղարիայի իշխանություններից: Սակայն դա տեղի չունեցավ: Ադրբեջանական իշխանությունների փոխարեն ասպարեզ իջավ Ադրբեջանի ֆուտբոլի ֆեդերացիան, այն էլ Բուլղարիայի խոշորագույն երկու թերթերից «24 ժամի» մեկնաբանի արտախումը Բաքվից հեռելու եւ արտախման լուրը հայկական զանգվածային լրատվամիջոցների երեւակայությանը վերագրելու համար:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ Ադրբեջանի ֆուտբոլի ֆեդերացիայի մամուլի ծառայության ղեկավար Սուլեյմանզադեի՝ ռուսական «Ռեգնում» գործակալությանն արած հայտարարությանը, որը տեղ է գտել նաեւ «Գազեթա ռու» ինտերնետային էջում: Սուլեյմանզադեն հայտարարել է, որ Ադրբեջան-Բուլղարիա ֆուտբոլային խաղը լուսաբանելու համար հավատարմագրված բուլղարացի 8 լրագրողների մեջ Փափազյան ազգանունով որեւէ մեկը չի եղել:

Ավելին, ըստ Սուլեյմանզադեի, հայկական աղբյուրները հիշատակել են Բաքվում Բուլղարիայի դեսպան Իվան Պալչեւի միջնորդության մասին, որպեսզի ադահովի Փափազյանի մուտքը Բաքու, մինչդեռ դեսպանատանը հայտարարել են, որ չգիտեն Փափազյան անունով որեւէ մեկին: Այսինքն՝ Սուլեյմանզադեն ակնարկում է, որ հայկական աղբյուրները սուտ են, իսկ ինքը:

Մինչ հարցին պատասխանելը պետք է ասել, որ այս աղբյուրներից «Արմինֆո» գործակալությունը բուլղարական «24 ժամ» թերթի թղթակցի արտախման մասին տեղեկացնելիս հենվել էր բուլղարական աղբյուրների, իսկ «Ազգը»՝ ինտերնետային «Սանսուրսուզ» թերթի վրա:

Այլ կերպ, հայկական աղբյուրները սկզբնաղբյուր ունեն: Ընդ որում, դրանցից «Սանսուրսուզը» թուրքական է, որը տեղեկությունը հենց Բաքվում է քաղել եւ Էդուարդ Փափազյանի արտախման մասին նշելիս միաժամանակ ընդգծել է Բուլղարիայի արտգործնախարարությանը եւ Ադրբեջանում Բուլղարիայի դեսպանատան միջնորդությունների, Փափազյանի վտարման առնչությամբ Բուլղարիայում Ադրբեջանի դեսպանատանը երկրի արտգործնախարարության ներկայացրած բողոքի նոտայի, ինչպես նաեւ «24 ժամ» թերթի նոյեմբերի 18-ի համարի մասին, որտեղ «Բաքուն «24 ժամին» արտախեց» խորագրի տակ գրված է եղել. «Էդուարդ Փափազյանի արտախումը բուլղարական պետության դեմ կատարված անարգանք է»:

Հետեւաբար, եթե խոսքը ստելուն է վերաբերում, ապա Սուլեյմանզադեն հայկական աղբյուրների փոխարեն պետք է ակնարկի վերջիններիս սկզբնաղբյուրների մասին: Քանի որ սկզբնաղբյուրների թվում է նաեւ «Սանսուրսուզը» եւ անիմաստ է, որ թուրքական այս թերթը ստեր հորինի՝ վարկաբեկելու համար Ադրբեջանին, ուստի հայկական աղբյուրների մասին ակնարկելիս ստողի դերում, ի դեմս մամուլի ծառայության ղեկավար Սուլեյմանզադեի, ակնհայտորեն հայտնվում է Ադրբեջանի ֆուտբոլի ֆեդերացիան:

Բայց եւ այնպես, անհասկանալի է մնում մեկ հարց, Սուլեյմանզադեն ստելիս ո՞ւմ անունից է հանդես գալիս՝ Ադրբեջանի ֆուտբոլի ֆեդերացիայի՞, թե՞ ադրբեջանական իշխանությունների: Եթե ֆեդերացիայի անունից է հանդես գալիս, ապա պետք է ենթադրել, որ ադրբեջանական իշխանություններն իրենց լիազորությունների մի մասը հանձնել են ֆուտբոլի ֆեդերացիային, որովհետեւ Փափազյանին Բաքվից արտախող անվտանգության ծառայությունները իշխանությունների ենթակայության տակ են:

Եթե Սուլեյմանզադեն Ադրբեջանի իշխանությունների անունից է հանդես գալիս, այդ դեպքում էլ պետք է մտածել, որ վերջիններս բուլղարահայ լրագրողի արտախման խայտառակությանը մասնակից են դարձնում ֆուտբոլի ֆեդերացիային, որպեսզի ֆեդերացիան, բացի իր հիմնական պարտավորություններից, ստանձնի նաեւ փաստաբանի գործառույթներ: Կամ էլ՝ Ադրբեջանում իշխանությունների եւ ֆուտբոլի ֆեդերացիայի միջեւ աշխատանքի նոր բաժանում է կատարվել, այն առումով, որ երկրից Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչներին արտախում են իշխանությունները, իսկ սպորտի հայ մեկնաբաններին՝ ֆուտբոլի ֆեդերացիան:

ՀՐԱՉՅԱ ՉԱՔԱՐՅԱՆ

ՍՈՍԻԼԻՍ

Համաշխարհային բանկի առաջին 20 մլն դոլարը աղքատության հաղթահարման ծրագրին

Համաշխարհային բանկի տնօրենների խորհուրդը նոյեմբերի 18-ին հաստատել է Հայաստանին տվող 20 մլն դոլար աղքատության հաղթահարման աջակցության վարկը: Այդ մասին երեկ հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի ղեկավար Ռոջեր Ռոբինսոնը:

Վարկը տրամադրվել է, ինչպես նախկինում, նույն արտոնյալ պայմաններով՝ 40 տարով, որի մարումը կսկսվի 10 տարի հետո եւ 0,75 տոկոսով: Գումարը նախատեսված է 4 ոլորտների համար: Դրանք են մակրոտնտեսական կարգապահության համախմբում եւ կառավարման ուժեղացում, մրցակցային միջավայրի ապահովացում եւ գույքային իրավունքների ամրապնդում, սոցիալական եւ բնապահպանական ռիսկերի նվազեցում, գյուղատնտեսության արդիականացում: Բացի վերոնշյալ վարկային գումարից, այս ծրագրին 4,3 մլն եվրո դրամաշնորհ է հատկացնելու Հոլանդիայի կառավարությունը:

Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար **Վարդան Խաչատրյանը** նշեց, որ այս վարկի հաստատմանը նպաստեց 6 տարվա ընթացքում աշխատանքը: Գումարը կտցվի մինչեւ տարեվերջ: ՀԲ համար կարեւոր խնդիրներից է եղել գործարար մթնոլորտի բարելավումը, որը շարունակելու է լինել գլխավոր խնդիրը նաեւ առաջիկա 4 տարիներին: Այս վարկն ուղղակի աջակցություն է բյուջեին, իսկ բյուջեն նույնպես բխում է աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրից:

Հայաստանի պետական բյուջեում պաշտպանության ծախսերն ավելացնելու առնչությամբ տրված հարցին Համաշխարհային բանկի ներկայացուցիչը պատասխանեց, որ պաշտպանությունը անհրաժեշտ ծախս է Հայաստանի համար: Առավել եւս հաշվի առնելով Հայաստանի հանգամանքները, Ռոջեր Ռոբինսոնը բնական համարեց, որ պաշտպանության նախարարությունը լրացուցիչ գումար է պահանջում: Դրա հետ ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավարը հատկանշական համարեց, որ առաջին անգամ Հայաստանի պետական բյուջեում կրթությանը հատկացված գումարն ավելի էր, քան պաշտպանությանը հատկացվածը:

Անդրադառնալով «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրով Հայաստանին տրվելիք գումարի չափին, Վարդան Խաչատրյանը տեղեկացրեց, որ նախապես նշվող 900 մլն դոլարի ծրագրային առաջարկները, որոնք Հայաստանը պատրաստակամություն էր հայտնել ներկայացնում կողմին, նախատեսված էին երեք տարվա համար: «Իսկ երկու տարվա ծրագրի համար արվող առաջարկները պետք է այլ գումար կազմեին», ասաց նախարարը:

ԱՐԱ ՏԱՐԻԲԵԿՅԱՆ

Ադրբեջանցիները կեղծիքի մեջ մեղադրում են հայկական աղբյուրներին

Թերեւս նրանք «մոռանում» են, որ այդ աղբյուրները թուրքական սկզբնաղբյուր ունեն

Ադրբեջանի եւ Բուլղարիայի ազգային հավաքականների նոյեմբերի 17-ին կայացած ընկերական հանդիպումը լուսաբանելու համար բուլղարացի ֆուտբոլիստների հետ նույն ինքնաթիռով Բաքու էր ուղեւորվել բուլղարական «24 ժամ» թերթի սպորտային բաժնի ղեկավար Էդուարդ Փափազյանը: Սակայն «Բինա» օդանավակայանում Ադրբեջանի անվտանգության ծառայությունները պաշտառաբանելով, թե նա հայ է, արգելել էին նրա մուտքը երկիր, ապա նստեցրել էին նույն ինքնաթիռը եւ արտախել:

Թվում էր, թե սպորտն ազգայնամոլության, իսկ ազգայնամոլությունը հայատյացության դրսեւորման միջոց դարձնելու այս տգեղ արարքի համար Ադրբեջանի իշխանությունները պաշտոնապես ներողություն կխնդրեն Բուլղարիայի իշխանություններից: Սակայն դա տեղի չունեցավ: Ադրբեջանական իշխանությունների փոխարեն ասպարեզ իջավ Ադրբեջանի ֆուտբոլի ֆեդերացիան, այն էլ Բուլղարիայի խոշորագույն երկու թերթերից «24 ժամի» մեկնաբանի արտախումը Բաքվից հեռելու եւ արտախման լուրը հայկական զանգվածային լրատվամիջոցների երեւակայությանը վերագրելու համար:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ Ադրբեջանի ֆուտբոլի ֆեդերացիայի մամուլի ծառայության ղեկավար Սուլեյմանզադեի՝ ռուսական «Ռեգնում» գործակալությանն արած հայտարարությանը, որը տեղ է գտել նաեւ «Գազեթա ռու» ինտերնետային էջում: Սուլեյմանզադեն հայտարարել է, որ Ադրբեջան-Բուլղարիա ֆուտբոլային խաղը լուսաբանելու համար հավատարմագրված բուլղարացի 8 լրագրողների մեջ Փափազյան ազգանունով որեւէ մեկը չի եղել:

Ավելին, ըստ Սուլեյմանզադեի, հայկական աղբյուրները հիշատակել են Բաքվում Բուլղարիայի դեսպան Իվան Պալչեւի միջնորդության մասին, որպեսզի ադահովի Փափազյանի մուտքը Բաքու, մինչդեռ դեսպանատանը հայտարարել են, որ չգիտեն Փափազյան անունով որեւէ մեկին: Այսինքն՝ Սուլեյմանզադեն ակնարկում է, որ հայկական աղբյուրները սուտ են, իսկ ինքը:

Մինչ հարցին պատասխանելը պետք է ասել, որ այս աղբյուրներից «Արմինֆո» գործակալությունը բուլղարական «24 ժամ» թերթի թղթակցի արտախման մասին տեղեկացնելիս հենվել էր բուլղարական աղբյուրների, իսկ «Ազգը»՝ ինտերնետային «Սանսուրսուզ» թերթի վրա:

Այլ կերպ, հայկական աղբյուրները սկզբնաղբյուր ունեն: Ընդ որում, դրանցից «Սանսուրսուզը» թուրքական է, որը տեղեկությունը հենց Բաքվում է քաղել եւ Էդուարդ Փափազյանի արտախման մասին նշելիս միաժամանակ ընդգծել է Բուլղարիայի արտգործնախարարությանը եւ Ադրբեջանում Բուլղարիայի դեսպանատանը միջնորդությունների, Փափազյանի վտարման առնչությամբ Բուլղարիայում Ադրբեջանի դեսպանատանը երկրի արտգործնախարարության ներկայացրած բողոքի նոտայի, ինչպես նաեւ «24 ժամ» թերթի նոյեմբերի 18-ի համարի մասին, որտեղ «Բաքուն «24 ժամին» արտախեց» խորագրի տակ գրված է եղել. «Էդուարդ Փափազյանի արտախումը բուլղարական պետության դեմ կատարված անարգանք է»:

Հետեւաբար, եթե խոսքը ստելուն է վերաբերում, ապա Սուլեյմանզադեն հայկական աղբյուրների փոխարեն պետք է ակնարկի վերջիններիս սկզբնաղբյուրների մասին: Քանի որ սկզբնաղբյուրների թվում է նաեւ «Սանսուրսուզը» եւ անիմաստ է, որ թուրքական այս թերթը ստեր հորինի՝ վարկաբեկելու համար Ադրբեջանին, ուստի հայկական աղբյուրների մասին ակնարկելիս ստողի դերում, ի դեմս մամուլի ծառայության ղեկավար Սուլեյմանզադեի, ակնհայտորեն հայտնվում է Ադրբեջանի ֆուտբոլի ֆեդերացիան:

Բայց եւ այնպես, անհասկանալի է մնում մեկ հարց, Սուլեյմանզադեն ստելիս ո՞ւմ անունից է հանդես գալիս՝ Ադրբեջանի ֆուտբոլի ֆեդերացիայի՞, թե՞ ադրբեջանական իշխանությունների: Եթե ֆեդերացիայի անունից է հանդես գալիս, ապա պետք է ենթադրել, որ ադրբեջանական իշխանություններն իրենց լիազորությունների մի մասը հանձնել են ֆուտբոլի ֆեդերացիային, որպեսզի ֆեդերացիան, բացի իր հիմնական պարտավորություններից, ստանձնի նաեւ փաստաբանի գործառույթներ: Կամ էլ՝ Ադրբեջանում իշխանությունների եւ ֆուտբոլի ֆեդերացիայի միջեւ աշխատանքի նոր բաժանում է կատարվել, այն առումով, որ երկրից Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչներին արտախում են իշխանությունները, իսկ սպորտի հայ մեկնաբաններին՝ ֆուտբոլի ֆեդերացիան:

ՀՐԱՉՅԱ ՉԱՔԱՐՅԱՆ

26-ական տարվա ազատազրկման պահանջ 6 հայ օդաչուների համար

1-ին էջից

Վերջնական դատավճիռն ընթերցվելու է նոյեմբերի 26-ին: Դատավարությանը ներկա են դեսպան Սերգեյ Մանասարյանը եւ ՀՀ պետական արարողակարգի ծառայության ղեկավարի տեղակալ Գեւորգ Պետրոսյանը: Ըստ ՀՀ ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչության, դատավարությունը սկսվել է նոյեմբերի 16-ին կարճ նիստով, որի ժամանակ հիմնական մեղադրյալ, 48-ամյա Նիկ դյու Տուան լիովին հրաժարվել է իր նախնական ցուցմունքներից եւ հայտարարել, թե դրանք կորզվել են տանջանքների եւ մահվան սպառնալիքների ներքո: Նա հերքել է իր մասնակցությունը որեւէ հեղաշրջման եւ ասել, թե այդ կարգակցությամբ որեւէ մեկի հետ գործարքի մեջ չի եղել:

Նիկ դյու Տուան ավելի վաղ խոստովանել էր, որ իրեն առաջարկվել է մեծ գումար հեղաշրջման փորձը ղեկավարելու համար: Բացառությամբ նրա, մյուս բոլոր ամբաստանյալները հերքել են իրենց մեղսակցությունը եւ ասել, որ գաղափար անգամ չեն ունեցել հեղաշրջման փորձի մասին: Հասարակաց Գվինեայի նախագահ Թեոդորո Օբիանգ Նգումենա Մբասոգոն բրիտանական «Մեյլ» օրաթերթին տված հարցազրույցում իր նկատմամբ հեղաշրջման փորձի մեջ մեղադրել էր Լոնդոնում հաստատված լիբանանցի գործարար Էլի Խալիլին եւ Մարկ Թեչերին: Մբասոգոն ասել էր, որ «եթե նրանց ոլանները հաջողվեին, ապա կոտորած կլիներ», իսկ ամբաստանյալներին համարել էր բարոյականությունից զուրկ անհատներ, «որոնք փորձել են ոճիր իրականացնել մեր երկրի նկատմամբ, որի պատճառով արյուն կթափվեր»:

Հասարակաց Գվինեայի նախագահի իշխանությունը տարալեզու փորձի մեջ մեղադրվում են 19 անձինք, որոնցից 7-ը հարավաֆրիկացիներ են, 6-ը՝ հայ օդաչուներ, 5-ը՝ տեղացիներ: Ձերբակալվածներից մեկը մահացել է բանտում, ըստ իրավապաշտպան կազմակերպությունների, կրտսաններից: Եթե հայ օդաչուների համար պետական մեղադրողը «ընդամենը» 26 տարի է պահանջել, ապա մնացյալների պատժաչափերը տատանվում են 42-ից մինչեւ 102 տարի: Հարավաֆրիկյացի Նիկ դյու Տուայի եւ նրա գվինեացի գործընկերոջ համար նախատեսված է մահապատիժ:

Դատական նիստի ընթացքում հայ օդաչուները լրացուցիչ չեն հարցաքննվել: Ըստ ՀՀ ԱԳՆ տարածած հաղորդագրության, նրանց առողջական վիճակը բավական է, ինքնազգացողությունը՝ բավարար, իրենց պահում են զուսպ: Հայկական պատվիրակությունը շարունակելու է մնալ Մալաբոյում եւ հետեւելու է դատավարության եւ հետդատավարության ընթացքին: «Մենք լիովին համոզված ենք եւ հայտարարում ենք, որ հայ օդաչուները որեւէ առնչություն չունեն Հասարակաց Գվինեայի եւ նրա իշխանությունների դեմ ուղղված որեւէ գործողության», ասվում է հաղորդագրության մեջ:

Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Մարգարետ Թեչերի որդին՝ Մարկ Թեչերը, կասկածվում է Հասարակաց Գվինեայի նախագահի դեմ ենթադրյալ հեղաշրջման փորձը ֆինանսավորելու մեջ: «Երկաթյա լեդիի» որդին ձերբակալվել էր Հարավաֆրիկյան Հանրապետությունում օգոստոսին եւ ազատ արձակվել 300 հազար դոլար գրավի դիմաց: BBC-ն նշում է, որ գրավի գումարը ենթադրաբար տվել է նրա 78-ամյա մայրը: Մարկը բազմիցս կրկնել է, որ ինքն անմեղ է: Ըստ BBC-ի, չի բացառվում, որ Թեչերը 15-ամյա բանտարկություն կրի Հարավաֆրիկյան Հանրապետությունում, եթե հաստատվի նրան վերագրվող մեղադրանքը:

Հասարակաց Գվինեան նախկինում եղել է իսպանական գաղութ եւ անկախացել 1968 թ.: Այդ ժամանակից ի վեր երկիրը ղեկավարել են երկու նախագահներ՝ Ֆրանսիսկո Նգումենան (նրա 10-ամյա իշխանության տարիներին երկրից հեռացել է բնակչության 1/3-ը) եւ իրոք որդին՝ գործող նախագահը, որը 1979 թ. իշխանությունից հեռացրեց հորը: Մոտ 28 հազար քառ. կմ տարածք ունեցող, նավթով հարուստ այս երկրում երկու տարի առաջ 68 մարդ դատապարտվեց մինչեւ 20 տարվա բանտարկության նախագահ Մբասոգոյի դեմ հեղաշրջման փորձի մեղադրանքով: Անջատողականություն հրահրելու մեղադրանքով 1998 թ. 15 մարդ դատապարտվել է մահվան: Մոտ կես միլիոն բնակչություն ունեցող Հասարակաց Գվինեան համարվում է աշխարհի ամենաբոնաշիրական երկրներից մեկը:

Երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներն այցելեցին Ստեփանակերտ

Տարբեր երկրների երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած խմբի եռօրյա այցը Ստեփանակերտ նպատակ ուներ տեղում ծանոթանալու երիտասարդության հիմնախնդիրներին եւ քննարկելու հետագա համագործակցության ոլորտները:

«Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամի կազմակերպած այս ընդգրկուն միջոցառումը հերթական հիստերիան էր առաջացրել Ադրբեջանում: Խմբի անդամների վկայությամբ, իսկ նրանք ներկայացնում էին 11 եվրոպական երկրներ, այցից առաջ նախագգուշական նամակներ էին ստացել Ադրբեջանի երիտասարդական կազմակերպություններից, թե իբր Ղարաբաղը ահաբեկչության երկիր է, եւ իրենց կարող են պատանդ վերցնել ու վաճառել: Ու նաեւ, իբր Ղարաբաղում զանգվածաբար տարածված են թմրամոլությունն ու ալկոհոլիզմը: Այս կարգի կասկածները, սակայն, փարատվել են Արցախում նրանց ունեցած բազմաթիվ հանդիպումների ու զրույցների ընթացքում: Իսկ խումբը հանդիպումներ ունեցել է թե՛ պետական եւ թե՛ հասարակական կառույցների պատասխանատուների հետ: Մասնավորապես նրանց ընդունել են ԼՂՀ Ազգային ժողովի նախագահը, վարչապետը, ԿՄՍ եւ արտաքին գործերի նախարարները: Եղել են հանդիպումներ նաեւ Արցախի պետհամալսարանի ուսանողական խորհրդի, երիտասարդական կազմակերպությունների անդամների ու ոչ կառավարական կազմակերպությունների ղեկավարների հետ:

Երիտասարդ հյուրերին հետաքրքրել են նաեւ ԼՂՀ օրենսդրական դաշտին ու երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակին առնչվող հարցերը, որոնց պատասխանները նրանք սպառիչ ստացել են օրենսդիր եւ գործադիր մարմիններում ունեցած հանդիպումների ժամանակ:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկումներն ընդգրկել են ինչպես երիտասարդության բարոյահոգեբանական հիմնախնդիրները, այնպես էլ ԼՂՀ-ի միջազգային չճանաչվածության պարագայում տեղի հասարակական կառույցների՝ արտաքին կապերի ակտիվացմանն առնչվող հարցերը: Այս կապակցությամբ «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչը նշեց, որ դարաբաղյան երիտասարդական ՀԿ-ները պետք է մշակեն ու պատրաստեն մարդու իրավունքներին առնչվող միջոցառումների նախագծեր: Դրանք միջազգային կազմակերպությունների կողմից անդրադարձի ուշադրության կառնվեն: Ինչ մնում է նախագծերի կենսագործմանը, ապա իրենց հիմնադրամը կարող է ֆինանսապես աջակցել դրանց: Իսկ հյուրերը իրենց պատրաստակամությունը հայտնեցին օգնելու նման ծրագրերի նախագծմանը, որի տեխնիկական պարամետրերի ադահովումը եւս կարեւոր է միջազգային չափանիշներին համարեցնելու առումով:

Երիտասարդական միջազգային խումբը Արցախից մեկնեց, իրենց իսկ խոստովանությամբ, հաճելի տպավորություններով:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

«Երկրորդ սերնդի ամեն մի սփյուռահայ ունի հայրենիքի հանդեպ ցավի առօրյա»

Մեսակ Արծրունին Ղարաբաղի վերաբնակեցման մասին

1999 թ. աշնանը նախկին վարչապետ Վազգեն Սարգսյանի կառավարության պատվերով Մեսակ Արծրունին կազմում է Հայաստանի եւ Արցախի վերաբնակեցման ու տարաբնակեցման ծրագիր: Այսօր հենց այդ ծրագրով է լավ թե վատ իրականացվում վերաբնակեցումը Լեռնային Ղարաբաղում:

2002 թ. նոյեմբերին ստեղծվում է հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միությունը՝ միավորելով Հայաստանի եւ ԼՂՀ սահմանային շրջանների բնակեցմամբ մտահոգ 5 հասարակական կազմակերպությունների Հայաստանից, Արցախից եւ սփյուռքից:

«Սփյուռահայերից շատ-շատերը, ծնողներից լսելով կամովին կամ կոտրվելու հարկադրանքի տակ լքած իրենց հայրենի բնակավայրերի մասին, հոգու մեջ ամփոփում են այդ կորսված տառածի մի հատվածը՝ դարձնելով իրենց ինքնության հիմնասյուներից մեկը: Երկրորդ սերնդի ամեն մի սփյուռահայ ունի հայրենիքի հանդեպ ցավի առօրյա: Այն ի շահ մեր այսօրվա Հայաստանին ծառայեցնելու համար անհրաժեշտ է ձեւավորել հայրենիք-սփյուռք համագործակցության դաշտ, որը հեռու կլինի քաղաքական եւ մանավանդ տնտեսական շահարկումներից», ասում է «Երկիր» միության խորհրդի նախագահ Արծրունին:

Գործունեության 2 տարիներին «Երկիրն» իրականացրել է մոտ 10 ծրագիր՝ 700 հազար դոլար ընդհանուր արժողությամբ: Արծրունին հատկապես առանձնացնում է Քնարավան գյուղի կառուցումը ԼՂՀ Նոր Շահումյան շրջանում՝ դա համարելով սփյուռք-հայրենիք համագործակցության եզակի օրինակ:

«Լիբանանից Հարությունյան ընտանիքը՝ ամուսինը եւ որդիները, կնոջ եւ մոր՝ Քնարի հիշատակին գյուղ են կառուցել. 15 տուն, դպրոց, համայնքապետարան եւ բուժկետ: Սա հայրենակորուս հայի համար թիվ 1 արդարահատույցն է: Սա խղճի, սփոփման համար չէ, այլ իրական գործ կատարելու վճռականություն: Հարությունյանների նման ընտանիքները շատ-շատ են սփյուռքում: Պետք է ձեւավորել վստահության դաշտ, որ նմանօրինակ նախաձեռնությունները որիսկ չլինեն մյուս սփյուռահայերի համար», ասում է նա:

Վերաբնակեցումը եւ տարաբնակեցումը, Արծրունու կարծիքով, հասարակական գիտություն է. «Եթե այն ոչ մասնագիտական է, ապա կարող է անգամ վնասել պետությանը»: Երեւանում եւ Արարատյան դաշտի ավաններում է կենտրոնացած Հայաստանի եւ Ղարաբաղի բնակչության կեսից ավելին, ինչը երկրի անվտանգության տեսակետից որեւէ կերպ արդարացված չէ, մանավանդ այնպիսի աշխարհագրական պայմաններում, որոնք պարտադրվել են մեզ մեր պատմության ընթացքում: Փաստորեն, այսօր Հայաստանը գրեթե թիկունք չունի, այսինքն՝ երկիրը զուրկ է ներքին տարածքներից:

Համաձայն Հայաստանի եւ Արցախի վերաբնակեցման ծրագրի՝ մինչեւ 2012 թ. ԼՂՀ բնակչությունը պետք է կազմի 300 հազար մարդ: Մինչդեռ այսօրվա տեմպերը ցույց են տալիս, որ ծրագիրն իմաստազրկվում եւ տարալվում է: Արծրունու կարծիքով, գործընթացը պետք է հեռու պահել քաղաքականությունից: «Վերաբնակեցումը պետք է լինի հայրենիքին ծառայություն, ոչ թե քաղաքական դիվիդենտներ ստանալու ակնկալիք», ասում է նա:

«Օրինակ, Քնարավանի ծրագրի նախաձեռնությունը, որն աննախադեպ եւ խիստ օրինակելի երեւույթ է վերաբնակեցման գործընթացում, նշում է «Երկիր» միության նախագահը, թերեւս չամբողջացած՝ հանդիպում է արդեն ոչ առողջ ինքնադատությունների եւ անհիմն մեղադրանքների, որոնց հետեւում կանգնած են մարդիկ եւ ուժեր, ովքեր վերաբնակեցման գաղափարն օգտագործում են քաղաքական դիվիդենտներ ստանալու համար: Մենք այս բոլորին նայում ենք հանգիստ, այն փաստի գիտակցմամբ, որ սփյուռքում առկա է չքաղաքականացված, բայց հայրենիքի ճակատագրով տարտրոփ ապրող մի սվար զանգված, որն էլ այսօր խանդավառությամբ ընդունում է մեր ծրագրերը»:

«Երկիրը» ոչ թե դրամահավաք է կազմակերպում, այլ փորձում է սփյուռքում մտահոգ կազմակերպություններին դարձնել գործընկեր», ասում է նա եւ հավելում, որ յուրաքանչյուր ծրագրի իրականացում ներկայացվում է կազմակերպության ինտերնետային էջում, եւ հովանավորը կարող է հետեւել, թե ինչպես են ծախսվում իր տված գումարները: «Սփյուռքահայն աշխատանքի այս որակը պետք է պահանջի Հայաստանում գործող յուրաքանչյուր կազմակերպությունից, որը զբաղվում է հայրենիքի հզորացմամբ»:

Հադրութի շրջանի Նորաշեն գյուղի վերաբնակեցումն իրականացրել է «Երկիր» միությունը՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Ֆրանսիայի մասնաճյուղի հովանավորությամբ: Վերջերս ծրագրի նախաձեռնող եւ հովանավոր Լեւոն Քեբաբջյանի ու Արա Ահարոնյանի գլխավորությամբ կազմակերպության մի ներկայացուցչական պատվիրակություն էր մեկնել Նորաշեն՝ տեղում ծանոթանալու աշխատանքներին: Ծրագրի հաջողությունը ոգեւորել է նրանց, եւ որոշել են իրենք անմիջականորեն ներգրավվել վերաբնակեցման գործընթացում՝ իրենք համակարգելով ծրագրերի աշխատանքները:

«Ես շատ ուրախ եմ ՀԲԸՄ-ի այս որոշման համար: Խորհրդային Հայաստանում ՀԲԸՄ-ի առաջին ծրագրերը ներառում էին ճահիճներ չորացնելը, բնակավայրեր, կամուրջներ կառուցելը: Բարեգործականը հենց Արցախում իր գործունեությամբ կարող է իրականացնել Պողոս Նուբարի նպատակները», ասում է Արծրունին:

«Երկիր» միության նախագահը կարծում է, որ սփյուռքը պետք է լինի ուղղակի գործող կառույց Հայաստանում եւ ԼՂՀ-ում, բայց իր ծրագրերն իրականացնի հասարակական կազմակերպությունների միջոցով: Նրա կարծիքով, այս ձեւով է հնարավոր վերաբնակեցման, Հայաստանին եւ Արցախին օգնության յուրաքանչյուր ծրագիր հեռու պահել քաղաքական շահարկումներից:

Շուշիի վերականգնման նոր նախաձեռնություն

Ազատագրումից ավելի քան 12 տարի անց Շուշին այցելուների վրա դառը տպավորություն է թողնում: Այնտեղ վերականգնման եւ վերաբնակեցման լուրջ աշխատանքներ չեն տարվում, եթե ոմանք գալիս են բնակվելու քաղաքում, ապա այն պատճառով, որ գնալու այլ տեղ չունեն:

Վերջերս, ընդունելով ՀԲԸՄ 100 հոգանոց պատվիրակությանը, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը նկատել էր, որ «Ղարաբաղն ունի 27 միլիոնանոց բյուջե եւ ի վիճակի չէ միայնակ վերականգնել Շուշին, որի համար անհրաժեշտ է 100 մլն դոլար»:

Չնայած 2000 թ. ստեղծվել է «Շուշի» հիմնադրամը, սակայն գործունեության 4 տարիներին հիմնադրամը լուրջ ծրագրեր չի իրականացրել: Այս տարի փորձ արվեց վերակենդանացնելու հիմնադրամը: Նախագահ Ղուկասյանի գիտությամբ Մեսակ Արծրունին նշանակվեց հիմնադրամի գործադիր տնօրեն: Շուշիի պատվավոր նախագահն ի պատճառս ԼՂՀ նախագահն է, համանախագահների խորհրդում ընդգրկված են ԼՂՀ մշակույթի նախարար Արմեն Սարգսյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանը եւ հրապարակախոս Բակուր Կարապետյանը:

«Ես առաջարկեցի համանախագահների խորհրդին ընդլայնել սփյուռքի ներկայացուցիչներով, ովքեր ներկայացուցչական դեմք ունեն: Լիբանանի հայ կաթոլիկ համայնքի ներկայացուցիչ Գրեգուար Գալուստը ընդգրկվեց համանախագահների կազմում եւ անմիջապես սանձնեց Շուշիի վերականգնման առաջին հանգրվանի ծրագրերը հովանավորելու գործընթացը», ասում է Արծրունին:

Առաջին հանգրվանում որոշվել է դադարեցնել Շուշիում կատարվող բոլոր աշխատանքները եւ կենտրոնանալ հեռանկարային ծրագիր կազմելու վրա. ուսումնասիրել Շուշիի պատմամշակութային ժառանգությունը, մասնագիտորեն արդացուցել, որ Շուշին հայկական մշակույթի օրոն է եւ «այդ արդացույցը դարձնել վերականգնման հիմնական կապիտալը»:

Հնագիտության դոկտոր Համլետ Պետրոսյանը եւ Բակուր Կարապետյանն ամռանն ամբողջացրել են քաղաքի պատմամշակութային հուշարձանների ցուցակը: Հետազոտողները չափագրել են մոտ 180 շենքեր: Կազմվում է քաղաքի վերականգնման ընդհանուր նախագիծը, առանձնացվել են քաղաքի 5 թաղամասեր, եւ ներկայումս միջոցներ են որոնում այդ թաղամասերի վերականգնման նպատակով միջազգային ճարտարապետական մրցումներ կազմակերպելու համար, որոնց կկարողանան մասնակցել նաեւ ոչ հայաստանցի մասնագետներ: 2005 թ. մարտից կսկսվեն հնագիտական պեղումներ, իսկ նույն տարվա աշնանը Շուշիում տեղի կունենա գիտաժողով, որտեղ «մենք հնարավորություն կունենանք ասելու, թե ինչ ունենք Շուշիում, ինչ արժեք ունի եւ ինչպես պետք է նայեն ապագային զուտ մասնագիտական մոտեցումներով»: Սա է առաջին հանգրվանը, որի բոլոր աշխատանքները ֆինանսավորում է Լիբանանի հայ կաթոլիկների համայնքը:

Երկրորդ հանգրվանում կսկսվեն քաղաքի վերականգնման աշխատանքները, նախագծերի համար կհայտարարվեն մրցույթներ, որոնց կարող են մասնակցել նաեւ ոչ հայ ճարտարապետներ: «Շուշի» հիմնադրամը գործելու է թափանցիկության նույն սկզբունքների պահպանմամբ, որոնք ընկած են «Երկիր» միության գործելաոճի հիմքում», ասաց Արծրունին:

ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊՈ ԱՊԱՏԵՊՈՏ

Պետությունը եւ հասարակությունը քայքայող ուժը

Օրերս Հայաստանում պատշաճաբար գրանցվեց «Եհովայի վկաներ» աղանդավորական կազմակերպությունը՝ առաջացնելով մեր հասարակության դժգոհությունը: Շատ կազմակերպություններ, այդ թվում եւ երիտասարդական, բացասաբար անդրադարձան այդ փաստին՝ դա համարելով մեր ազգային արժեքների հիմքերը քայքայող սարք: 30-ից ավելի աղանդներից սա թերեւս ամենավտանգավորն է մեր հասարակության եւ պետության համար, որովհետեւ նրանց օրենքները հակասում են երկրի եւ ընդհանրապես բարոյական օրենքներին: Մայրը հրաժարվում է երեխային փրկելու համար դիմել բժշկական միջոցների, տղան հրաժարվում է զենք վերցնել հանուն հայրենիքի: Իսկ մեր օրերում շատերն են խուսափում զինվորական ծառայությունից, որն էլ նպաստում է նրանց շարքերի սվարացմանը՝ նրանց թիվը հասցնելով 8 հազարի: Նմաններին, անշուշտ, պետք է ենթարկել պատասխանատվության, քանի որ օրենքի առաջ հավասար են բոլորը՝ անկախ սեռից, ազգային, կուսակցական պատկանելությունից, կրոնից եւ այլն:

Հայաստանում բոլորն ունեն իրենց կարծիքն արտահայտելու իրավունք, բայց դրանով չպետք է ոտնահարեն ուրիշի իրավունքները, ինչը չի կարելի ասել սրանց մասին: Այդ «ինքնակոչ առաքյալները» ջանք չեն խնայում իրենց «գրավիչ» քարոզներով համալրելու այդ շարքերը համապատասխան «կադրերով»:

Իսկ մեր քաղաքացիների կարծիքն այս փաստի մասին հետեւյալն է.

Մելանյա Կիրակոսյան (մանկավարժ). Ինչպե՞ս կարելի է թույլ տալ նման բան, եթե նրանք պետական համակարգը համարում են սատանայական, չեն ընդունում մեր պետական խորհրդանիշը՝ դրոշը, որը սրբություն է յուրաքանչյուր հայի համար:

Ատոմ Հովհաննիսյան (վարորդ). Իմ կարծիքով, դա դրսից եկող պարտադրանք է:

Արման Ղուկասյան (ուսանող). Պետք է զգույշ լինել, որովհետեւ, իմ կարծիքով, նրանք ուրիշ նպատակ էլ ունեն: Ես ծանոթ եմ նրանց ուսմունքին, որը պարունակում է նաեւ քաղաքական տարրեր, բացի կրոնականից, իսկ կրոնական կողմն էլ ճիշտ չեն մեկնաբանում:

Աննա Կարապետյան (մանկավարժ). Սա մեծ վտանգ է հատկապես երիտասարդության եւ մատաղ սերնդի համար, չէ՞ որ նրանք են ապագան, իսկ այդ ոգով դաստիարակված ապագան Հայաստանի համար երանելի չէ:

Նելլի Կիրակոսյան (ուսանողուհի). Դեմ եմ, որովհետեւ աղանդը հենց նշանակում է կրոնից շեղում, իսկ դա բացասաբար է ազդում մարդու բարոյահոգեբանական վիճակի վրա, իսկ պետականորեն գրանցվելուց հետո նրանք իրենց գործունեությունն ավելի լայն թափով կծավալեն:

Գոռ Գասպարյան (իրավաբան). Նրանց պետք էր մեկուսացնել հասարակությունից, որովհետեւ իրենց քարոզները սխալ են: Դրանք հանգեցնում են հասարակության քայքայմանը: Հուսանք, որ հաջորդ քայլը չի լինի «Եհովայի վկաներին» օրենքի առաջ պատասխանատվությունից ազատելը:

ԳՈՀԱՐ ՋՈՒՀԱՐՅԱՆ

«Ավանդական գառներ»

Այսօր, երբ ողջ հասարակությունը, մասամբ գիտակցելով, մասամբ էլ զուտ պատշաճական ռեֆլեքսից դրդված արդարացի դատարկում է «Եհովայի վկաներ» տոտալիտար աղանդի գրանցումը իբրեւ քրիստոնեական կազմակերպության եւ ինքնադատում պետական ոչ ազգանպաստ քաղաքականությունը, գառնազգեստ այլ գայլեր շարունակում են իրենց ազգադավ գործունեությունը:

Ճիշտ այդպիսի մի դիպվածի ականատես եղանք մի կիրակի, երբ հերթական անգամ այցելեցինք Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ մասնակցելու պատարագի: Աղանդավորների հայտնվելն այդ հսկայական եկեղեցում հատկապես պատարագի ընթացքում, երբ շուրջ 2000 հավատացյալ է ներկա, կարելի է ասել՝ սովորական երեւույթ է եւ հիմնավորումն էլ հասկանալի է: Գայլի ձգտումը միշտ էլ գառան փարախ մտնելն է: Ճիշտ այն պահին, երբ ողջ եկեղեցին համակված է աղոթական բույրով, մեր ժողովրդի ազգուրաց ներկայացուցիչները լկտիաբար սկսում են թերթոններ ու գրքույկներ բաժանել՝ հավատացյալին գայթակղելու եւ իրենց ցանցի մեջ գցելու համար: Հետագա զարգացումը հստակ է. ինչպես մարմինը օտարասարր այլ մարմին չի ընդունում եւ դուրս է վանում, այնպես էլ հավատացյալները նախանձախնդրորեն դաս են տալիս ստրկամիտ եկվորին եւ ճանապարհում: Նույնը կատարվեց եւ այս անգամ, երբ նկատեցի, որ եկեղեցու գավթում ժողովրդի կուտակում առաջացավ: Լրագրողին հատուկ հետաքրքրություն դրսեւորեցի եւ ի զարմանս ամենի պարզվեց, որ այս անգամ թերթոնային արշավ են սկսել ավետարանչականները:

Թերեւս հնարավոր է հասկանալ աղանդների քայքայիչ, պառակտիչ գործունեության դրդապատճառները, սակայն իրեն «ավանդական», «քույր» հորջորջող ավետարանչական եկեղեցու աղանդակերպ կեցվածքը եւ Հայ եկեղեցու հոտի մեջ հոգեորություն կատարելը դժվար է տրամաբանորեն ընկալել, առավել եւս դատելով արտաքին հավատանքների ազդակներից, տարածվող տեղեկատվությունից եւ պարբերաբար հասարակությանը մատուցվող ժամերեկ պարագլուխների քաղցրահունչ խոսքերից:

Դյուրին է աղանդավորին կասեցնելը եւ առերեսելը, սակայն թիկունքում ծոցյալ կեղծ բարեկամի ամբարտավան քաղաքականության արհավիրքները դժվար է հաղթահարել: Եվ ո՞ւր է մեր ժողովրդի միասնական կամքը՝ իբրեւ մեծամասնություն մեր հայրենիքից դուրս վանելու ներքուստ մեզ քայքայող այս չարափառ օտարամիտներին: Ո՞վ է պատշաճ կանգնելու հոգեւոր անվտանգությանը եւ օրենքով սաստելու նման գործողությունները: Որքա՞ն ժամանակ պիտի զոհ գնանք հիվանդագին՝ փոխադարձության հանդուրժողականության եւ ամենաթողության սին գաղափարներին ու արժեքներին:

ԱՐԻԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայ եկեղեցու
հավատարիմ զավակ

ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
մրցույթով մասնավորեցվող
«Ամասիայի գյուղատնտեսական ուսումնական բազա» ՊՓԲԸ-ի
մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2004թ.-ի հուլիսի 22-ի թիվ 1156-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցնել բոլոր սուբյեկտներին մասնակցելու «Ամասիայի գյուղատնտեսական ուսումնական բազա» ՊՓԲԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	Շիրակի մարզ, գ.Ամասիա
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N1156-Ն, 22.07.04թ.
1.3.	Ընկերության բեմերի մակերեսը (Մ) որից՝	369.5
1.4.	Զբաղեցրած հողային տարածքը (հա)	1.6
	Տեղեկություններ հողահատկացման հիմքերի մասին	Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N1028999
1.5.	Գործունեության հիմնական տեսակը	գյուղատնտեսական ուսումնա-փորձնական աշխ. իրականացում
1.6.	Աշխատողների թվաքանակը (01.10.2003-ի դրությամբ)	3
1.7	Գնահատված ակտիվներ (հազ.դրամ)	8574
1.8	Կանոնադրական կապիտալ (հազ.դրամ)	1088
1.9	Ընկերության բաժնետոմսերի գնահատված արժեքը(հազ.դրամ)	1088

* Համաձայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկանքի, աշխատողների թվաքանակը 01.11.04թ. դրությամբ 2 մարդ է:

2. Ընկերության հաշվեկշռի ցուցանիշներ (01.10.2003թ-ի դրությամբ)

(հզ դրամ)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Ոչ ընթացիկ ակտիվներ , այդ թվում	233.1	8573.6
2.1.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում՝	233.1**	8573.6
♦	շենքեր /2 հաս/	36.9	2092.4
♦	կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ /2 հաս/	49.3	1579.7
♦	Մեքենաներ և սարքավորումներ /23 հաս/	121.1	3930.4
♦	տրանսպորտային միջոցներ /5 հաս/	25.5	960.3
♦	Արտ. ցանք, գործիք և այլն /6 հաս/	0.3	10.8
2.1.2.	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	-
2.1.3.	Ոչ նյութական ակտիվներ	-	-
2.1.4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	-	-
2.2.	Ընթացիկ ակտիվներ	-	-
2.3.	Ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-
2.4.	Ընթացիկ պարտավորություններ	7486	7486
♦	ՀՀ պետական բյուջեի նկատմամբ	2589	2589
♦	Անձնակազմին աշխատանքի վարձատրության գծով	3176	3176
♦	Սոցիալական ապահովագրության գծով	1323	1323
♦	Այլ ընթացիկ պարտավորությունների գծով	398	398

** Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքներ

2.5.Համաձայն ՀՀ կառավարության N1156-Ն, 22.07.04թ. որոշման, Ընկերության 1999-2003 թվականների տնտեսական գործունեության արդյունքներով վճարման ենթակա շահաբաժինների գծով պարտավորություններ չունի:

2.6.Համաձայն «Ամասիայի գյուղատնտեսական ուսումնական բազա» ՊՓԲԸ-ի հաշվապահական հաշվեկշռի, Ընկերության պարտավորությունները 01.10. 04թ.-ի դրությամբ կազմում է 8111հազ.դրամ, որից՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ 2629հազ. դրամ, սոցիալական ապահովագրության գծով՝ 1203հազ.դրամ:

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 և 5.2 կետերը/ և 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցույթին առաջարկ, որը ներառում է հետևյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձևը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Ամուրի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից /այսուհետև՝ Ամուրի կենտրոն/)

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված ելնելով ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

3.2. Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Ամուրի կենտրոնի վարչաշնչական բաժին՝ մինչև 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով և փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

3.4. Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

3.6. Ծրարը պետք է հագեցված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաև ֆախիդիալային կարգով: Ստացված փաստաթղթերը Ամուրի կենտրոնի վարչաշնչական բաժնում դրվում են ծրարի մեջ և փակվում:

3.8. Ներկայացված ծրարները Ամուրի կենտրոնի վարչաշնչական բաժնի կողմից կնքվում և մուտագրվում են:

3.9. 5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10. Դիմողները մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները քննարկման ենթակա չեն:

3.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում և մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

3.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը,

/նվազագույն գինը՝ *272 հազ դրամ*/

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով,

սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ աշխատատեղերի և նվազագույն աշխատավարձի վերաբերյալ:

3.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

3.14. Մրցույթի կայացման դեպքում ընկերությունը պետք է վերակազմակերպվի «Ամասիայի գյուղատնտեսական ուսումնական բազա» բաց բաժնետիրական ընկերության:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

4.2. Մրցույթի հաղթողը գույքի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրության օրինակը ստանալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում:

4.3. Որպես մրցույթի նախավճար վճարված գումարն ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ և մրցույթում չհաղթելու կամ մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

4.4. Մրցույթի հաղթողը արձանագրության օրինակը ստանալու օրվանից հաշված 60 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

4.5. Համաձայն ՀՀ կառավարության 22.07.04թ. N1156-Ն որոշման, գնորդին կառաջարկվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնել ընկերության կողմից զբաղեցված հողատարածքները:

4.6. Համաձայն ՀՀ կառավարության N1156-Ն, 22.07.04թ. որոշման, մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գույքային իրավունքների պետական գրանցման և գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները ու տուրքերը կատարվում են գնորդի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.7. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու և պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, և մրցույթը հանվում է չկայացած:

4.8. Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաև գնահատման պահից հետո առաջացած իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը:

4.9. Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	108 800 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաշվի հաշիվը	Թիվ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	14-ը հունվարի 2005թ. , ժամը՝14:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Հր.Քոչարի 27, «Ամուրի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչաշնչական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը	14-ը հունվարի 2005թ , ժամը՝15:00 ք.Երեւան, Հանրապետության հրապարակ, ՀՀ Կառավարական 2-րդ շենք, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆախիդիալային կապ	(3741) 27-65-94
5.7	Ինտերնետ	URL: //www.privatization.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Ամուրի կենտրոն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
մրցույթով մասնավորեցվող
«Արմավիրի նավթամթերք» ՓԲԸ-ի
մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2004թ.-ի հուլիսի 10-ի թիվ 1334-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու «Արմավիրի նավթամթերք» ՓԲԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	ք.Արմավիր, Սայաթ-Նովա 1
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N1334-Ն, 10.06.04թ.
1.3.	Ընկերության բեմերի մակերեսը (Մ)	4078
1.4.	Զբաղեցրած հողային տարածքը (հա)	9
	Տեղեկություններ հողահատկացման հիմքերի մասին	Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 0148987, 20.10.00թ. հերթով վաճառքի առնառ
1.5	Գործունեության հիմնական տեսակը	
1.6	Աշխատողների թվաքանակը* (01.10.2003թ-ի դրությամբ)	25
1.7	Գնահատված ակտիվներ (հազ.դրամ)	153809
1.8	Կանոնադրական կապիտալ (հազ.դրամ)	143625
1.9	Մասնավորեցման ենթակա բաժնետոմսերի գնահատված արժեքը (հազ.դրամ)	

*Համաձայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկանքի, աշխատողների թվաքանակը 01.11.04թ. դրությամբ 25 մարդ է:

2. Ընկերության հաշվեկշռի ցուցանիշներ (01.10.2003թ-ի դրությամբ)

(հզ. դրամ)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Ոչ ընթացիկ ակտիվներ , այդ թվում	458869.9	153733.3
2.1.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում՝	458869.9**	153733.3
	շենքեր /14հաս/	123788.7	26696.7
	կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ /25 հաս/	299949.9	119999.1
	մեքենաներ և սարքավորումներ /148 հաս/	20673.3	3690.7
	տրանսպորտային միջոցներ /8 հաս/	12797.6	3068.5
	արտ. ցանք, գործիք և այլն /40 հաս/	1660.4	278.3
2.1.2.	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	
2.1.3.	Ոչ նյութական ակտիվներ	-	-
2.1.4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	-	-
2.2.	Ընթացիկ ակտիվներ	76	76
2.3.	Ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-
2.4.	Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	10184	10184
	ՀՀ պետական բյուջեի նկատմամբ	5333	5333
	անձնակազմին աշխատանքի վարձատրության գծով	4652	4652
	սոցիալական ապահովագրության գծով	199	199

** Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները:

2.5.Համաձայն ՀՀ կառավարության N1334-Ն, 10.06.04թ. որոշման, Ընկերության 1999-2003 թվականների տնտեսական գործունեության արդյունքներով վճարման ենթակա շահաբաժինների գծով պարտավորություններ չունի:

2.6.Համաձայն «Արմավիրի նավթամթերք» ՓԲԸ-ի հաշվապահական հաշվեկշռի, Ընկերության պարտավորությունները 01.10. 04թ. դրությամբ կազմում են 10989հազ.դրամ, որից՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ 5731հազ.դրամ, սոցիալական ապահովագրության գծով՝ 334 հազ.դրամ:

3.Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 և 5.2 կետերը/ և 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցույթին առաջարկ, որը ներառում է հետևյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձևը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Ամուրի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից /այսուհետև՝ Ամուրի կենտրոն)

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված ելնելով ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

3.2. Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Ամուրի կենտրոնի վարչաշնչական բաժին՝ մինչև 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով և փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

3.4. Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

3.6. Ծրարը պետք է հագեցված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաև ֆախիդիալային կարգով: Ստացված փաստաթղթերը Ամուրի կենտրոնի վարչաշնչական բաժնում դրվում են ծրարի մեջ և փակվում:

3.8. Ներկայացված ծրարները Ամուրի կենտրոնի վարչաշնչական բաժնի կողմից կնքվում և մուտագրվում են:

3.9. 5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10. Դիմողները մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները քննարկման ենթակա չեն:

3.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում և մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

3.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը, /նվազագույն գինը՝ 35906 հազ դրամ/

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով, սոցիալական ծառայություններ, այդ թվում աշխատատեղերի և նվազագույն աշխատավարձի վերաբերյալ:

3.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

4.2. Մրցույթի հաղթողը գույքի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստանալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում:

4.3. Որպես մրցույթի նախավճար վճարված գումարն ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ և մրցույթում չհաղթելու կամ մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

4.4. Մրցույթի հաղթողը 60 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

4.5. Համաձայն ՀՀ կառավարության N1334-Ն, 10.06.04թ. որոշման, գնորդին կառաջարկվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնել ընկերության կողմից զբաղեցված հողատարածքները:

4.6. Համաձայն ՀՀ կառավարության N1334-Ն, 10.06.04թ. որոշման, մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գույքային իրավունքների պետական գրանցման և գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները ու տուրքերը կատարվում են գնորդի հաշվին՝ օրենքով սահմանված կարգով:

4.7. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու և պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, և մրցույթը հանվում է չկայացած:

4.8. Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաև գնահատման պահից հետո առաջացած իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը:

4.9. Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	14 362 000 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաշվի հաշիվը	Թիվ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	14-ը հունվարի 2005թ. , ժամը՝14:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Հր.Քոչարի 27, «Ամուրի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչաշնչական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը	14-ը հունվարի 2005թ. , ժամը՝15:00 ք.Երեւան, Հանրապետության հրապարակ, ՀՀ Կառավարական 2-րդ շենք, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆախիդիալային կապ	(3741) 27-65-94
5.7	Ինտերնետ	URL: //www.privatization.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Ամուրի կենտրոն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր ոչ պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2004թ. նոյեմբերի 26-ին, ժամը 11:00-ին «Աճուրդի կենտրոն» ոչ պետական ոչ առևտրային կազմակերպությունում, հասցեն՝ ք.Երևան, Նորքի 1-ին զանգված 95/96, (Գայի 4):

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՀՀ կառավարության 21.10.04թ. թիվ 1443-Ն որոշմամբ մասնավորեցվող «Սարիկո» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը

N	Ընկերության անվանումը	Հասցեն	Ընկերության ընդհանուր բաժնետոմսերի քանակը (հատ)	Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը (դրամ)	Պետական բաժնեմասը ընկերության կանոնադրական կապիտալում (%)	Պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի Մեկնարկային գինը (հազ.դրամ)	Նվազագույն գինը (հազ.դրամ)
1	«Սարիկո» ՓԲԸ*	ք. Երևան, Սարաթովի 90	352695	1000	100	176348	88174

«Սարիկո» փակ բաժնետիրական ընկերության գնահատված ակտիվները (առ 21.10.2004թ.)՝

N	Անվանումը	Քանակը (հատ)	Ընդհ. մակերեսը (հա մետր)	Գնահատված մեծությունները (հազ.դրամ)
1	Շենքեր	15	58567.3	307945.43
2	Կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ	24	-	20476.12
3	Մեքենաներ և սարքավորումներ	78	-	6147.846
4	Արտ. տնտ. գույք, գործիք և այլն	137	-	7287.89
5	Բանող և մթերատու անասուններ	1	-	212.62
6	Ընթացիկ ակտիվներ	-	-	17272
	Ընդամենը			359342

* 2004թ. սեպտեմբերի 8-ին «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ տնտեսական դատարան «Սարիկո» ՓԲԸ-ն անվճարունակ ճանաչելու վերաբերյալ:

Համաձայն ՀՀ կառավարության 21.10.04թ. թիվ 1443-Ն որոշման «Սարիկո» ՓԲԸ-ի.

- կրեդիտորական պարտավորությունները 01.10.04թ. դրությամբ կազմում են 1215 հազ. դրամ,
- այլ կրեդիտորական պարտավորությունները 22.10.04թ. դրությամբ կազմում են 17420 հազ. դրամ, որոնք ենթակա են վճարման ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից նշված հաշվին՝ աճուրդի հաղթողի կողմից մասնավորեցման դրամական կմտման օրվանից մեկամսյա ժամկետում,
- կրեդիտորական պարտավորությունները ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նկատմամբ 22.10.04թ. դրությամբ կազմում են 369 հազ. դրամ:

Աճուրդը կանցկացվի հրավառական (գնի նվազեցման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել մասնակցության իրավունք ձեռք բերած մասնավորեցման սուբյեկտները կամ նրանց կողմից լիազորված անձինք:

Աճուրդին մասնակցելու իրավունք են ձեռք բերում մասնավորեցման այն սուբյեկտները, որոնք մինչև 2004թ. նոյեմբերի 25-ը, ժամը 17:00 ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (ք.Երևան, Հր.Քոչարի 27) են ներկայացրել՝

- աճուրդի մասնակցության հայտը,
- աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը (աճուրդի մասնակցության վճարի չափն է՝ 17634800 դրամ, մուտքագրման հաշիվն է՝ թիվ 1 տեղական գանձարքելական բաժանմունքի աճուրդի մասնակցության նախավճարի դրամային թիվ 900013145025 հաշիվը),
- իրավաբանական անձինք ներկայացնում են հիմնադիր փաստաթղթերի պատճենները:

Աճուրդի մասնակիցները պետք է ձեռք բերեն աճուրդի մասնակցի տոմս, որի գինն է 5000 դրամ, աճուրդի մասնակից չհանդիսացող անձանց (դիտորդների) տոմսի գինն է 3000 դրամ: Մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդը անցկացնում է աճուրդավար, որը հրապարակում է վաճառվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային գինը, աճուրդային հայտի չափը: Նշված հայտերով մեկնարկային գինն իջեցվում է այնքան, մինչև մասնակիցներից մեկը, բարձրացնելով իր տոմսին համապատասխանող հանդարը, տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով գույքը ձեռք բերելու մասին:

Աճուրդի ժամանակ վաճառքի գինը չի կարող իջեցվել նվազագույն գնից:

Աճուրդի հաղթող է հանդիսանում այն մասնակիցը, ով առաջինն է տալիս իր համաձայնությունը հայտարարված գնով գույքի գնման մասին:

Աճուրդում հաղթող հանդիսացած մասնակիցը պարտավոր է 30 որոշի ընթացքում ներկայացնել մասնակցի տոմսը և վճարել իր առաջարկած գնի առնվազն 5%-ի չափով գումար և ստորագրել աճուրդի մասին արձանագրությունը: Վերը նշված պարտավորությունները չկատարելու դեպքում նրա մուտքած մասնակցության վճարը չի վերադարձվում, և նա զրկվում է աճուրդին հետագայում մասնակցելու իրավունքից ու դրսից է հրավիրվում դահլիճից:

Այդ դեպքում գույքի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից:

Աճուրդի մասին արձանագրությունը ստորագրելուց հետո՝ որպես աճուրդում հաղթող ճանաչված մասնակից, նրան տրվում է վճարման հաշվարկագիր՝ ծնացած վճարման ենթակա գումարը սահմանված ժամկետում՝ մեկ ամսվա ընթացքում, վճարելու համար:

Սահմանված ժամկետում նշված վճարումը չկատարելու դեպքում իր կողմից վճարած մասնակցության վճարը և իր առաջարկած գնի առնվազն 5%-ի չափով վճարած գումարը հետ չի վերադարձվում, իսկ աճուրդը համարվում է չկայացած:

Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, զանգահարել 27-65-94 հեռախոսահամարով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. հուլիսի 18-ի թիվ 1086-Ն որոշմամբ մասնավորեցվող

N	Գույքի (օբյեկտի) անվանումը	Հասցեն	Զբաղեցրած մակերեսը (մ/մ)	Գույքի մեկնարկային գինը (դրամ)
1	Հանդիսության սրահ	Շիրակի մարզ, գ. Ախուրյան	629.03	389050

Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցմանը իրավունք ունեն մասնակցելու այն մասնավորեցման սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք հայտարարության հրապարակման օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում դիմում են ներկայացրել «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ: Դիմումում նեռառված պայմանները պետք է առնվազն հավասար լինեն մասնավորեցման մասին ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ սահմանված պայմաններին (հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխության գործակիցը) հակառակ դեպքում դիմումը կմերժվի:

Դիմումները կքննարկվեն սահմանված ժամկետը (մեկ ամիս) լրանալուց հետո:

Դիմումներ ներկայացնելու և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք. Երևան, Հր Քոչարի, 27 հասցեով կամ զանգահարել 27-65-94 հեռ. համարով:

ՀՀ պետական գույքի կառավարման վարչություն

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

մրցույթով մասնավորեցվող «Գլխամասային կոմունտս» ՊՓԲԸ գույքի կազմից առանձնացված

«Վաղարշապատ» հյուրանոցի մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2004թ.-ի հոկտեմբերի 21-ի թիվ 1452-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու «Գլխամասային կոմունտս» ՊՓԲ-ի գույքի կազմից առանձնացված «Վաղարշապատ» հյուրանոցի մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	ք. Էջմիածին, Կիրովի փող.
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N1452-Ն, 21.10.04թ.
1.3	Ընկերության շենքերի մակերեսը (մ/մ)	4796
1.4.	Զբաղեցրած հողային տարածքը (հա)	0.1
	տեղեկություններ հողահատկացման հիմքերի մասին	Չեն պահպանվել
1.5.	Գնահատված արժեքը (հազ.դրամ)	56852

Գույքի կառուցվածքային միավորները

N	Կառուցվածքային միավորի անվանումը	Հասցեն	Շենքերի մակերեսը	Զբաղեցրած հողատարածքը
1.	«Վաղարշապատ» հյուրանոց	ք.Էջմիածին, Կիրովի փող.	4668	0.1
2.	«Վաղարշապատ» հյուրանոցին կից խանութ	ք.Էջմիածին, Կիրովի փող.	128	-

2. Տեղեկություններ մասնավորեցվող գույքի վերաբերյալ

(հզ դրամ)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում	1017.3*	56107.4
•	շենքեր /2 հատ/	991.6	55260
•	մեքենաներ և սարքավորումներ /1 հատ/	0.5	15.7
•	արտ. տնտ. գույք, գործիք և այլն /47 հատ/	25.2	831.7
2.2.	Ընթացիկ ակտիվներ	745	745

* Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 և 5.2 կետերը/ և 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցութային առաջարկ, որը ներառում է հետևյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (նրանք կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից /այսուհետև՝ Աճուրդի կենտրոն/)

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված տվյալ ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

3.2. Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Աճուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժին՝ մինչև 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով և փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

3.4. Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

3.6. Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաև ֆաքսիմիլային կապով: Ստացված փաստաթղթերը Աճուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժնում դրվում են ծրարի մեջ և փակվում:

3.8. Ներկայացված ծրարները Աճուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժնի կողմից կնքվում և մուտքագրվում են:

3.9. 5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10. Դիմողները մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները քննարկման ենթակա չեն:

3.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում և մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

3.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետևյալ պայմանները.

մասնավորեցվող հյուրանոցի համար առաջարկվող գինը, Նվազագույն գինը՝ 10000հզդրամ/

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով,

3.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

4.2. Մրցույթի հաղթողը գույքի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրությունն ստորագրելու պահից հաշված մեկ ամսվա ընթացքում:

4.3. Որպես մրցույթի նախավճար վճարված գումարն ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ և մրցույթում չհաղթելու կամ մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

4.4. Մրցույթի հաղթողը արձանագրության օրինակը ստանալու օրվանից հաշված 60 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

4.5. Համաձայն ՀՀ կառավարության 21.10.04թ. թիվ 1452-Ն որոշման, մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գույքային իրավունքների պետական գրանցման և գույքի արժեքի որոշման հետ կապված վճարներն ու տուրքերը կատարվում են գնորդի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.6. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու և պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, և մրցույթը համարվում է չկայացած:

4.7. Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	1000 000 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտքագրման հատուկ հաշիվը	Թիվ1 տեղական գանձարքելական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	**05-ը հունվարի 2005թ., ժամը՝14:00**
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Հր. Քոչարի 27 «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը	**05-ը հունվարի 2005թ. , ժամը՝15:00** ք.Երեւան, Հանրապետության Հրապարակ, ՀՀ Կառավարական 2-րդ շենք, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆաքսիմիլային կապ	**27-65-94**
5.7	Ինտերնետ	***URL: //www.privatization.am***

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Աճուրդի կենտրոն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Ադրբեջան-«Ալ Ղաիդա» կապերի առկայության նոր մնդում

ԱՄՆ հատուկ ծառայությունները պնդում են, որ Չեչնիայում ահաբեկիչները ֆինանսավորվում են ադրբեջանական խողովակներով

Պենտագոնի հետախուզությունը գաղտնազերծել է փաստաթղթեր, որոնց համաձայն Ուսամա բեն Լադենը ծրագրել է իր «Ալ Ղաիդա» կազմակերպությունը տեղափոխել Չեչնիա, քանի որ Արեւմուտքը չի կարող ոմբահարել այդ «ռուսական անկյունը»: Այս մասին գրում է «Վոլդնեթ դեյլի» ինտերնետային հանդեսը՝ վկայակոչելով «Ջուդիշլ ուոչ» հասարակական կազմակերպության (www.Judicial Watch) ինտերնետային էջը:

«Ջուդիշլ ուոչը» հետաքննում եւ դատական կարգով հետաքննում է ԱՄՆ կառավարությունում կոռուպցիայի կասկածելի դեպքերը: Մասնավորապես կազմակերպության նախագահ Թոմ Ֆիթոնը դեռ 2000 թ. իշխանություններից պահանջել էր բավարարել հետեւյալ հարցի պատասխանը. ինչո՞ւ ԱՄՆ նախկին նախագահ Քլինթոնը ժամանակին հրաման տվեց ոմբահարել Սուդանի «Աս Շիֆա» ֆաբրիկան եւ Աֆղանստանի խոսք ֆաղաքի շրջակայքը, որտեղ ենթադրաբար «Ալ Ղաիդա» կազմակերպության ուսումնական ճամբարն էր գտնվում: Պենտագոնի հետախուզությունը Ֆիթոնի պատասխանում նշում է, որ պաշտպանության նախարարության հետախուզությունն իմացել է թիվ 1 ահաբեկչի եւ նրա հանցակիցների գործունեության մասին: Որպես զեկույցի ցնցող դրվագներից մեկը նշվում է այն պնդումը, որ գոյություն ունի ահաբեկիչների կողմից ֆինանսավորվող կայուն «ուղիղ երթուղի Պակիստանից եւ Աֆղանստանից Թուրքիայով ու Ադրբեջանով դեպի Չեչնիա»: Ֆիթոնը պնդում է «Ալ Ղաիդայի» եւ Ադրբեջանի կապը: Վկայակոչելով Պենտագոնի հետախուզությանը, նա հայտարարել է, որ «Ալ Ղաիդան» գործում է նաեւ Կենտրոնական Ասիայում:

Սա առաջին դեպքը չէ, երբ Ադրբեջանը ամբաստանվում է «Ալ Ղաիդայի» եւ թիվ 1 ահաբեկիչ Ուսամա բեն Լադենի հետ կապեր ունենալու մեջ: Բեն Լադենի կապերն Ադրբեջանի հետ սկսվել են 90-ականների կեսերից: Ադրբեջանը, ըստ ամերիկյան Կոնգրեսի տվյալների, բեն Լադենի «Ալ Ղաիդա» կազմակերպության հետ կապեր ունեցող 34 երկրների ցուցակում է: Հանգուցյալ նախագահ Հեյդար Ալիեւը ստիպված էր անվերադարձ աջակցություն հայտնել ահաբեկչության դեմ ԱՄՆ հայտարարած պատերազմին: 2002 թ. հոկտեմբերի 23-ին ադրբեջանական «Թրենդ» գործակալությունը հաղորդեց, որ Ադրբեջանի հատուկ ծառայություններն ավելի քան 3 տասնյակ միջազգային ահաբեկիչների, ովքեր անդամակցել են ահաբեկչական «Ալ Ղաիդա», «Ալ Ջամաաթ, ալ իսլամիա» եւ «Իսլամական ջիհադ» խմբավորումներին, ձերբակալել են Բաքվում եւ արտաքսել Եգիպտոս, արաբական այլ երկրներ:

Ծայրահեղական խմբավորումներից ամենաակտիվն Ադրբեջանում «Իսլամական ջիհադն» է, որը համարվում է «Ալ Ղաիդայի» կարեւորագույն թեւը: 2000 թ. մայիսին Լոնդոնում ձերբակալվեցին «Ջիհադի» ադրբեջանական բջջի 2 անդամներ, որոնցից մեկը, ըստ ամերիկյան պետքարտուղարության տվյալների, Իբրահիմ Էյդարուզն էր՝ Բաքվի բջջի ղեկավարը մինչեւ 1997 թ., որը նաեւ կապեր ուներ Քեչնիայում եւ Տանզանիայում ամերիկյան դեսպանատների ռմբակոծումների հետ:

Մինչեւ 1999 թ. ծանուցիչ ապացույցներ կային, որ Ադրբեջանն օգտագործվում է որպես «Ալ Ղաիդայի» բազա: Ամերիկյան Ասոշիեյթեդ պրես գործակալությունը 1999 թ. նոյեմբերի 14-ին հաղորդեց, որ բեն Լադենը դարաբաղյան պատերազմում Ադրբեջանի կողմից առնվազն 2 ճակատամարտի է մասնակցել: Նկատենք, որ Բաքուն 90-ական թթ. սկզբներին փորձում էր դարաբաղյան պատերազմին տալ կրոնական երանգ եւ ստանալ իսլամական ծայրահեղական, ահաբեկչական կազմակերպությունների օժանդակությունը:

Բաքվի «Էխո» թերթը 2001 թ. սեպտեմբերի 1-ի համարում գրեց, որ «Ալ Ղաիդայի» անդամ Ջամալ Ահմեդ էլ Ֆադլը, որը ձերբակալվել էր Քենիայի եւ Տանզանիայի ամերիկյան դեսպանատների պայթյունների իրականացմանը մասնակցելու մեղսակցությամբ, պնդել է, որ «Ալ Ղաիդան» Ադրբեջանում ակտիվ գործունեություն է ծավալում 1989 թ.-ից:

«Մոսկու նյուս» շաբաթաթերթը 2000 թ. սեպտեմբերի 11-ի համարում գրեց, որ 1993 թ. ամռանը Հեյդար Ալիեւը Ղարաբաղի դեմ պատերազմելու համար վարձեց ավելի քան 1000 մոջահեդների: Մինչ Ալիեւի իշխանության գալը Ղարաբաղում հայերի դեմ կռվում էին չեչեն ահաբեկիչները:

Այսպես, Շամիլ Բասաեւը 2000 թ. հուլիսի 14-ին Բաքվի ANS հեռատաքնկերությանը տված հարցազրույցում ասում է. «Ազնվորեն ասած, ես ինքս իմ մոջահեդներին դուրս բերեցի Ադրբեջանից: Մենք այնտեղ (Ղարաբաղ) էինք եկել ոչ թե ավարի, այլ ջիհադի համար»: Ահաբեկիչ Բասաեւն այս հարցազրույցում խոստովանում է, որ 1992 թ. մի քանի անգամ եղել է Ղարաբաղում իր մոջահեդների հետ, վերջիններից մեկն էր, որ լքել էր Շուշին:

Երեկվա իրենց համարներում բեն Լադենի եւ Ադրբեջանի կապերի մասին Պենտագոնի հետախուզության տարածած հաղորդագրությանն անդրադարձել են ադրբեջանական 2 թերթեր՝ «525 զազեթը» եւ «Ենի զամանը»: «Նոր մեղադրանք Ադրբեջանի դեմ» «525 զազեթը» նկատում է, որ առաջին դեպքը չէ, երբ փորձ է արվում Ադրբեջանին մեղադրել «Ալ Ղաիդայի» հետ գաղտնի համագործակցության մեջ: Իսկ ահա, «Ենի զամանը» «Հանդիպման վայրը փոխել չի կարելի. ԱՄՆ հետախուզությունը Ուսամա բեն Լադենին տեղադրում է Ադրբեջանում» հրապարակման մեջ նշում է, որ ամերիկյան կողմը նման մեղադրանքներ տարածելով փորձում է Ադրբեջանին ճնշումների ենթարկել, որպեսզի վերջինս դեմ չլինի իր երկրի տարածքում ամերիկյան ռազմակայանների տեղակայմանը:

ԹԱՔՈՒ ՀՂԵՎՈՐՅԱՆ

Բուշ. «Ուկրաինան կստիպի, եթե չանցկացնի ժողովրդավարական ընտրություններ»

ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի վարչակազմը Ուկրաինային հորդորել է անցկացնել «ազնիվ եւ բաց» նախագահական ընտրություններ: «ԱՄՆ-ը պաշտպանում է Եվրալանդյան ընկերակցությանն անդամակցելու Ուկրաինայի ձգտումը, որը պահանջում է հավատարմություն ընդհանուր արժեքներին: Եթե ընտրությունները չհամապատասխանեն ժողովրդավարական չափանիշներին, ապա Ուկրաինայի ակնկալիքները կտուժեն», ասվում է Սպիտակ տան մամլո քարտուղար Սքոթ Մաքլելանի տարածած գրավոր հայտարարության մեջ:

Փաստաթղթում նշվում է, որ նոյեմբերի 21-ին Ուկրաինայում կայանալիք նախագահական ընտրությունների 2-րդ փուլը «կարեւոր է ժողովրդի իրական կամքը, նոր հնարավորություններ կստեղծի ամերիկա-ուկրաինական առավել սերտ գործակցության համար»:

Ֆրանսիան հիշեցնում է, որ Սպիտակ տան վարչակազմը դժգոհել էր Ուկրաինայի նախագահական ընտրությունների առաջին փուլի արդյունքներից՝ հայտարարելով, թե ընտրությունները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին: Նոր հայտարարությունը հրապարակելիս Մաքլելանն Ուկրաինայի իշխանություններին հորդորել է խաղաղությունները ազատ ընտրության հնարավորություն ընձեռել: Ընտրությունների առաջին փուլում ներկայիս վարչապետ Յանուկովիչը եւ ազգայնականների թեկնածու Յուշչենկոն գրեթե հավասար քվեներ էին ստացել:

Սառցադաշտերի հալքը վտանգում է բնակավայրերի ջրամատակարարումը

Մոլորակի խաղաղաշունչ ջրի պաշարների 75 տոկոսը պարունակող լեռնային սառցադաշտերի արագացող հալքը սպառնալիք է ստեղծում բնակավայրերի ջրամատակարարման եւ բազմաթիվ կենդանիների գոյության համար: Այդ մասին Ասոշիեյթեդ պրես գործակալությանը հայտարարել է Լեռնագնացների ուսումնասիրման բրիտանական կենտրոնի տնօրեն Մարտին Փրայսը:

Լեռներից սկիզբ առնող գետերում սառցադաշտային ջրի բաժինը հասնում է 95 տոկոսի: Սառցադաշտերի հալվելը նախ կհանգեցնի խոշոր հեղեղումների, իսկ հետո խմելու ջրի միակ աղբյուրը կդառնան մթնոլորտային տեղումները:

Կլիմայի փոփոխությունների հետեւանքով լեռնային եւ նախալեռնային շրջաններում կփոխվի բազմաթիվ կենդանատեսակների ու բուսատեսակների բնական միջավայրը: Արդեն այժմ դրանցից շատերը խաղաղաշունչ ջուր փնտրելով՝ ավելի ու ավելի վեր են բարձրանում: Փրայսը նշում է, որ շատ կենդանիներ ու բույսեր ապագայում չեն կարողանա գոյատեւել:

Կենտրոնի կանխատեսումների համաձայն, Կիլիմանջարոն իր «սառցե գլխարկից» կզրկվի մինչեւ 2020 թ., իսկ Ամերիկայի հյուսիսում սառցադաշտերը կհալվեն մինչեւ 2030 թ.:

Ուրիշ գիտնականներ էլ կանխատեսում են, որ մոլորակի ջերմացման պայմաններում Արկտիկայի սառույցները հալվելով կբարձրացնեն համաշխարհային օվկիանոսի մակարդակը: Ենթադրվում է, որ մինչեւ դարավերջ ջրածածկ կլինեն Փարիզը, Բեռլինը, Լոնդոնը, Հռոմը, Պետերբուրգը, Վաշինգտոնը, Նյու Յորքը, Ալեքսանդրիան եւ մի շարք այլ քաղաքներ:

Մ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Կոնգրեսը 800 միլիարդով ավելացրեց դաշնային պարտքը

ԱՄՆ Կոնգրեսը 4 ձայնի առավելությամբ ընդունել է նոր օրինագիծ, որով դաշնային պարտքի առավելագույն չափը գերազանցվում է 800 միլիարդ դոլարով: Ասոշիեյթեդ պրեսը նշում է, որ այդպիսով դաշնային պարտքի առավելագույն չափը հասել է 8,18 տրիլիոն դոլարի: Դա 2,4 տրիլիոնով ավելի է, քան Բիլ Քլինթոնից Ջորջ Բուշի ժառանգած պարտքը:

Նախագահ Բուշը մտադիր է օրինագիծն ստորագրել առաջիկա երկուշաբթի: Վարչակազմի ներկայացուցիչները հատուկ հայտարարությամբ Կոնգրեսին շնորհակալություն են հայտնել ընդունված որոշման համար: «Այդ օրինագծի ընդունումը չափազանց կարեւոր է Միացյալ Նահանգների վարկունակության պահպանման համար», նշվում է նախագահի մամլո ծառայության հաղորդագրության մեջ:

Օրինագծի ընդունման պատասխանատու հանրապետական պատգամավորներն են, որոնք այդպիսով ուզում են գումարներ ստանալ իրենց նախընտրական խոստումների կատարումն ապահովելու համար:

Դեմոկրատները մեղադրում են հանրապետականներին, ասելով, որ նրանք ընտրություններում հաղթեցին հարկերը կրճատելու խոստումների շնորհիվ, իսկ հիմա փորձում են խոստումները կատարել ամերիկացիների ապագա սերունդների հաշվին:

Հանրապետականներն իրենց հերթին պնդում են, թե դեմոկրատներն անպատասխանատու են վարվում, ձգտելով քաղաքական շահաբաժիններ ստանալ պետական պարտքի սահմանափակման հաշվին:

Ֆալուջայում հայտնաբերվել է «Ալ Ղաիդայի» իրաքյան կենտրոններից մեկը

Ապստամբները խոսում են թշնամու կորուստների մասին

Ֆալուջա մտած ամերիկյան զորքերը հայտնաբերել են մի շենք, որի վրա փակցված է «Ալ Ղաիդա» կազմակերպություն» ցուցանակը: Ըստ երեւույթին դա հայտնի արմատական, ապստամբների առաջնորդ Աբու Մուսաբ ալ Զարքավիի շտաբն է, քանզի նրա խմբավորումը վերջերս վերանվանվել է «Իրաքյան Ալ Ղաիդա»: Ենթադրվում է, որ ինքը՝ ալ Զարքավին նախապես հեռացել է Ֆալուջայից: **«Ազգը»** քանիցս գրել է, որ նրան բռնելու համար ամերիկացիները 25 մլն դոլար են խոստանում:

Շենքում հայտնաբերվել են զանազան փաստաթղթեր, լուսանկարներ, համակարգիչներ, ղուրանի օրինակներ եւ կրոնական այլ գրքեր, ինչպես նաեւ երկու նամակ: Մեկում ալ Զարքավիից ֆինանսական օգնություն են խնդրում: Մյուսում ալ Զարքավիի հրահանգներն են իր գրոհայիններին:

Շենքի մոտ կա պայթուցիկների արհեստանոց, որտեղ հայտնաբերվել է Տեխասում գրանցված եւ ականման պատրաստ ջիպ ավտոմեքենա: Հաղորդվում է նախագահի մամլո ծառայության հաղորդագրության մեջ:

Ֆալուջայի հակակառավարական կազմավորումների ղեկավարությունը հինգշաբթի օրը տարածել է հայտարարություն, որի համաձայն մարտերի 10 օրերի ընթացքում կոալիցիոն ուժերն զգալի կորուստներ են կրել: Մասնավորապես նշվում է, որ ապստամբները ոչնչացրել են երկու «F-16» ռազմաթռիչ, 11 ուղղաթիռ, 5 անօդաչու լրտեսական օդանավ, «Չինուկ» ռազմափոխադրական ուղղաթիռ, 11 «Աբրամս» տանկ եւ 22 զինվորական ավտոմեքենա:

Փաստաթղթերի համաձայն, գրոհայինները գերի են վերցրել 126 ամերիկացի, 123 իրաքցի եւ 15 բրիտանացի զինծառայողների: Ամերիկացիները կորցրել են 400, Իրաքի ազգային գվարդիան՝ 140 մարդ: Ամերիկացի սպաներից մեկն իր ստորաբաժանման հետ իբր անցել է ապստամբների կողմը:

Իրաքում ամերիկացիները ենթակա են արյան մահացու հիվանդության

Ամերիկացի զինվորներն Իրաքում սկսել են հիվանդանալ արյան տարօրինակ հիվանդությամբ: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ հարյուրից ավելի զինվորների արյան մեջ հայտնաբերվել է հազվագյուտ եւ անչափ վնասակար մանրէ՝ Acinetobacter baumannii: Հակաբիոտիկների մեծ մասը չի ազդում այդ մանրէի վրա, իսկ մահացությունը կարող է հասնել 60 տոկոսի: Համեմատության համար նշենք, որ անսովոր թոքաբորբից մահանում է, որպես կանոն, հիվանդների 10 տոկոսը:

Վաշինգտոնում գործող «Ուոլթեր Ռիդ» բանակային բժշկական կենտրոնի մասնագետները պարզել են, որ 102 զինվորների արյունը վարակված է հիշյալ մանրէով, որը մի շարք դեպքերում առաջացնում է մանրէական մենինգիտ: Վարակման դեպքեր են հայտնաբերվել նաեւ Գերմանիայում գտնվող շրջանային բժշկական կենտրոնում, ինչպես նաեւ բանակային երեք հոսպիտալներում:

Բժիշկներն ընդգծում են, որ հիվանդներից 85-ը ծառայել են Իրաքում, Աֆղանստանում կամ Քուվեյթում: Ներկայումս անցկացվում են կանխարգելիչ միջոցառումներ: Բուժաքսաստողներին խորհուրդ է տրվում ձեռքերը լվանալ սպիրտով: Շատ դեպքերում միակ արդյունավետ հակաբիոտիկը կոլիստինն է: Այդ հնացած պատրաստուկը ներկայումս քիչ է արտադրվում թունավորության պատճառով:

Պ. Ք.

ՋԻՄ ՔԵՎԻԶԵԼ. «ԱՂՋԵՐԻՍ ՔՈՂԸ ԲԱՐՁՐԱՑՐԻՆ»

36-ամյա ամերիկացի դերասան Ջիմ Քեփզելը Մել Գիբսոնի «Քրիստոսի չարչարանքները» ֆիլմում Հիսուսին մարմնավորելուց հետո հայտնվել է համընդհանուր ուշադրության կենտրոնում: «Ցիմից մաքրություն ու մանկան անմեղություն է ճառագում: Նա դերի առաջին եւ միակ թեկնածուն էր», ասում է Գիբսոնը: Թեեւ Քեփզելը համարում է, որ իր կնքահայրը կինոյում



նշանավոր ռեժիսոր Թերենս Մալիքն է (նա «Բարակ կարմիր գիծ» պատերազմական դրամայով է 1998-ին դերասանը մուտք գործել մեծ կինո), գոհունակությամբ է ընդունում, որ Քրիստոսի դերը թերեւս դառնա իր «այցեքարտը»: Երբ Քեփզելն արդեն այնքան էր հոգնել հազար անգամ ինչած այն հարցից, թե ինչպես է դերին նախապատրաստվել, կասկի էր տալիս. «Օրը երկու անգամ քայլում էի ջրի վրայով, ինչպես ցամաքում, իսկ հետո ջուրը՝ վերածում գինու»: Իրականում Քեփզելն ամենայն լրջությամբ է մոտեցել իր կերպարին ու ֆիլմին, ինչի վկայությունն է նրա տարբեր հարցազրույցներից հավաքված այս ծաղկաքաղը: Ցիմը երդվյալ հավատացյալի համբավ ունի, եւ, ասում են, Հոլիվուդում միակն է, որ կրոնական համոզմունքներից ելնելով՝ հոժարվում է մերկանդամ կամ «բաց» տեսարաններում նկարահանվել: «Մեծ հաշվով, ինձ համար միեւնույնն էր՝ նշանավոր է ռեժիսորը, թե ոչ: Կարեւորն այն էր, թե ինչ է մտադիր անել այդ մարդը, ինչպես է տեսնում այդ պատմությունը: Եթե նա ասեր, թե ծրագրել է մի տարբերակ, որտեղ Հիսուսը միացա է պատվիրում «Dominoes»-ում, ես կհոժարվեի: Դա ինձ չէր հետաքրքրի: Ամենազարմանալին այն է, որ Մելը, ինձ հրավիրելով այդ դերը խաղալու, ոչինչ չգիտեր ոչ իմ, ոչ էլ համոզմունքներիս մասին: Չգիտեմ, թե նա ինչ էր տեսել իմ մեջ: Այդ օրերին ես էլ գրեթե չէի մտածում համոզմունքներիս մասին: Միայն մի բան էր մտքումս. «Տեր Աստված, ինչքա՞ն տիտի խոսեմ լաքիներեն եւ արամեերեն»:

Երբ առաջին անգամ հավաքվեցինք նախագծի մասին խոսելու, Մելն ասաց, որ պետք է առանձնապես նրբանկատ լինեմք: Եվ իմ կարծիքով, նրան հաջողվել է խույս տալ հակահրեականության վտանգից: Հռոմի պատը մեր ֆիլմը դիտելուց հետո ասել է, թե այնտեղ ամեն ինչ անկանխակալ կերպով է պատկերված: Իսկ ներկայիս պատը ավելին է արել հրեաների համար, քան որեւէ ուրիշ պատ մարդկության պատմության մեջ:

Իմ բարեկամը՝ ռեժիսոր Քեփին Ռեյնոլդսը, մի անգամ ասաց, թե կինոընթացքը ինքն է հուշում դերասանին, թե ինչ եւ ինչպես պետք է անի: Հիմա ես հասկանում եմ նրան: Ժամանակը, բյուջեն, կողմնակի հանգամանքները, ամեն ինչ իր ազդեցությունն է թողնում այն բանի վրա, թե արդյունքում ինչ կստացվի ժապավենին: Սկզբում ինձ թվում էր, թե ամենադժվարը այս աշխատանքի մեջ գլխարարի աթոռին ժամերով նստելն է: Իսկ երբ ուսս դուրս ընկավ, այդ աթոռին նստելը թվաց դասարկ բան: Հետո էլ սառչում էի խմուց: Այնուհետեւ պարզվեց, որ փշե պսակը չի մնում գլխիս, եթե պինդ չամրացվի: Բայց թերեւս ամենամեծ անախորժությունները ինձ պատճառեց, այնուամենայնիվ, դուրս ընկած ուսս, քանի որ խաչելության տեսարանում հովտի կողմից անընդհատ ուժեղ քամի էր փչում, որը շարունակ ինձ ու խաչը շրջում էր մյուս կողմը: Եվ ամեն անգամ, երբ քամին շրջում էր խաչը, ես զգում էի, թե ինչպես էին ջլերս խախտվում: Անտանելի ցավ էր: Ընդհանրապես, չեմ հասկանում, թե ինչպես ինձ հաջողվեց չընկնել ու տեսարանը ավարտին հասցնել: Ես աղոթում էի Տեր Աստծուն, որ զորավիգ լինի ինձ եւ չթողնի, որ ընկճվեմ:

Կարող եմ ինձ տարօրինակ տիպ համարել, բայց ես անկեղծորեն հավատում եմ, որ աղոթքները մեզ օգնեցին: Աղոթքներն ու հավատը: Այս դերի էությունը ես ավելի խորքերում էի փնտրում, քան բանականության մակարդակում: Դա պետք է գտնեի ուրիշ մեջ: Եվ միայն աղոթքն ինձ օգնեց այդ որոնումներում: Ամբողջ օրը խաչը քարշ էի տալիս եւ հոգնածությունից ոտքի վրա չէի մնում, բայց ամեն երեկո ժամերգության էի գնում եւ ամեն օր՝ հաղորդվում: Այն օրերին, երբ նկարահանվում էր խորհրդավոր ընթրիքը, բոլորս էլ գնում էինք ժամերգության եւ հաղորդվում:

Ես աղոթում եմ ու ինքս ինձ ասում, որ Տեր Աստված ինձ օգտագործեց իր նպատակների համար: Աչքերիս քողը բարձրացրին, որը թաքցնում էր ոչ միայն մարդու սրբությունը, այլեւ դաժանությունը:

Սա Հիսուսի եւ նրա մոր սիրո պատմությունն է, սիրո ամենամեծ պատմություններից մեկը աշխարհում:

Երբ հայտնվում եք Վատիկանում եւ տեսնում մեծ վարպետների ոճնանկարները, պարտադիր չէ, որ հավատաք Աստծուն՝ դրանց վարպետությունը գնահատելու համար: Այս ֆիլմին եւս, ըստերտպքին, պետք է այդպես վերաբերվել: Ֆիլմը կամ հասնում է ուրիշ, կամ չի հասնում: Կամ դառնում է քո ինքնության մի մասը, կամ՝ ոչ, որովհետեւ ասում է. քեզ դատելու են, ընդ որում՝ ամենայն խստությամբ»:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Երկու տարի առաջ Ջիմ Քեփզելին զանգահարել է Մել Գիբսոնի գործակալ Սթիվն Մաքեվիթին: Նրանք ցանկանում էին դերասանին հրավիրել սերֆինգի մասին պատմող իրենց ֆիլմում խաղալու: Գիբսոնն ու Քեփզելը հանդիպել են Մալիբուի անշուք սրճարաններից մեկում եւ զրույցի ընթացքում իրենք էլ չեն նկատել, թե ինչպես սերֆինգին նվիրված ֆիլմից անցել են «Քրիստոսի չարչարանքները» նախագծի քննարկմանը:

Մաքեվիթին համարում էր, թե Քեփզելը «մի փոքր տարօրինակ է» Քրիստոսի դերի համար, բայց, ի վերջո, համաձայնեց Գիբսոնի հետ, թե ավելի լավ դերակատար անհնար է գտնել:

Քեփզելը ավելի քան կես տարի նախապատրաստվել է դերին: Մեռած լեզուները, որոնցով խոսում են ֆիլմում, բնավ էլ ամենամեծ դժվարությունը չէր: Քեփզելը, ինչպես եւ մյուս դերակատարները, պարապել են հին լեզուների մասնագետների հետ: Բայց, ի տարբերություն մյուսների, Քեփզելը անցել է խստագույն սննդակարգի՝ դերին համապատասխան ֆիզիկական վիճակի հասնելու համար:

Մել Գիբսոնը պնդել է, որ մոնտաժի ժամանակ Քեփզելի աչքերի գույնը փոխվի, եւ համակարգչային հատուկ էֆեկտների օգնությամբ նրա աչքերը երկնագույնից դարձել են շագանակագույն: Ռեժիսորը ցանկացել է նաեւ, որ Հիսուսի դեմքը սեմիթական լինի:

Իտալիայում կատարված բնանկարահանումների ընթացքում Քեփզելը օրական ութ ժամ տրամադրել է գրիմին՝ վեր կենալով գիշերվա 2-ին եւ լիակատար ընդարմացման աստիճանի անշարժ նստելով: Ի վերջո, նրա կոճերն արդեն ջղաձգվում էին:

Ամենածանր փորձություններից մեկը դարձել է այն տեսարանի նկարահանումը, որտեղ Գողգոթայի ճանապարհը բռնած Հիսուսը տանում է իր ծանր խաչը: Գիբսոնի պնդմամբ, խաչն իսկական էր՝ կշռելով մոտ 25 կգ: Այս դրվագում Քեփզելի ուսը հոդախախտվել է:

Խաչելության տեսարանին նախապատրաստվելիս կայծակը հարվածել է այն սյունին, որի մոտ կանգնած էին Քեփզելը եւ նկարահանող խմբի անդամներից մեկը, բայց հրաբով ոչ ոք չի վնասվել:

Խաչելության տեսարանը նկարահանվել է ձմռանը, բլրի վրա, որ ամեն կողմից քամիներ էին փչում: Քեփզելը թունդ մրսել է, բայց տեղի չի տվել, մինչեւ որ ռեժիսորը նկարահանել է իրեն անհրաժեշտ բոլոր կադրերը: Այդ տեսարանի նկարահանման ընթացքում Հիսուսի դերակատարը 2 կգ նիհարել է, քանի որ դուբլերի ընդմիջումներին հրաժարվել է ուտել, խմել ու քնել:

Նկարահանումների ավարտին Քեփզելն այնքան է թուլացել, որ հիվանդացել է թոքաբորբի ողնուղեղային տեսակով:

Քրիստոսի ձաղկման տեսարանում, որը ամենադաժանն է ֆիլմում, որոշ կադրեր համակարգչային էֆեկտների արդյունք են, բայց ինչ-ինչ բաներ էլ «կենդանի» են նկարահանվել, եւ հռոմեացի զինվորների դերակատարները, քանիցս վրիպելով, իսկական հարվածներ են հասցրել Քեփզելին: Փրկչի դերակատարի մեջքին նույնիսկ սպիներ են մնացել, հիշատակ՝ իրեն բաժին ընկած փորձություններից:

ԲՐԱՆԴՈՅԻ ՉԽԱՂԱՑԱԾ ԴԵՐԸ

80-ամյա Մարլոն Բրանդոյի մահը խափանեց նրա անվան հետ կապված հետաքրքրական կինոնախագծի իրականացումը, որը սանձնել էր բրիտանացի պրոդյուսեր Նորմա Հեյմանը: Թունիսցի ռեժիսոր Ռիդիի Բեհիի «Բրանդոն եւ Բրանդոն» ֆիլմում մեծ դերասանը պիտի պատկերեր հենց իրեն: 5,5 միլիոն դոլար բյուջեով այդ ժապավենի նկարահանումները նախատեսված էր սկսել այս տարվա ամռանը:

Սյուժեի առանցքը թունիսցի մի երիտասարդի պատմությունն է: Նա տարված է «ամերիկյան երազանքով», որի մարմնացումը համարում է Մարլոն Բրանդոյին: Հաջողության ակնակալիքով տղան մեկնում է Միացյալ Նահանգներ, մինչդեռ այդ ուղեւորության վերջաբանը դառնում են հուսախաբությունն ու մենությունը:

Բրանդոն եռանդուն մասնակցություն էր բերել նախագծի մշակմանն ու սցենարի ստեղծման աշխատանքին, բայց չհասցրեց իր կյանքի վարագույրն իջեցնելուց առաջ խաղալ ինքն իրեն: Վերջին ֆիլմը՝ Բրանդոյի մասնակցությամբ մնաց 2001-ին ասպարեզ եկած «Արջուրը», որտեղ նրա խաղընկերներն էին Ռոբերտ Դե Նիրոն եւ Էդուարդ Նորթոնը: Գրեթե ամբողջ ֆիլմի ընթացքում Բրանդոն նստած էր եւ շարունակ հոգոցներ էր հանում իր ռեպլիկների միջեւ:

ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

22 Նոյեմբերի, 21.35 Կուլտուրա

«Աղվեսարուս»* Ռեժիսոր՝ Վիտտորիո Դե Սիկա: Դերերում. Փիթեր Սելերս, Բրիթ Էքլանդ, Վիկտոր Մաթյուր: ԱՄՆ - Մեծ Բրիտանիա, 1966:

Կատակերգություն մեծ գումարի հետամուտ խաբեբայի մասին, որը նպատակին հասնելու համար կինոնկարահանումների պատրանք է ներշնչում:

23 Նոյեմբերի, 22.40 Դ1

«Քրիստոսի չարչարանքները»* Ռեժիսոր՝ Մել Գիբսոն: Դերերում. Ջիմ Քեփզել, Մայա Մորգենստեռն, Մերջո Ռուբինի, Մոնիկա Բելուչչի, Ռոզալինդա Չելենտանո, Կլաուդիա Ջերինի: ԱՄՆ, 2004:

Ֆիլմը վերարտադրում է Հիսուսի երկրային կյանքի վերջին 12 ժամվա ողբերգական անցուդարձը:

23 Նոյեմբերի, 23.10 Կուլտուրա

«Անառիթ խողովարարը»* Ռեժիսոր՝ Նիքոլաս Ռեյ: Դերերում. Ջեյմս Դին, Նաթալի Վուդ, Սալ Մինեո: ԱՄՆ, 1955:

Ամերիկյան կինոյի լեգենդար գործերից մեկը, որի հերոսը մարմնավորում է երիտասարդության ընդարոսությունն ընդդեմ կոնֆորմիստական աշխարհի:

24 Նոյեմբերի, 23.20 Կուլտուրա

«Ռեյչել, Ռեյչել»* Ռեժիսոր՝ Փոլ Նյուման: Դերերում. Ջոան Վուդտորդ, Էսթել Փարսոնս: ԱՄՆ, 1968:

Հոլիվուդյան կինոաստղի առաջին ռեժիսորական աշխատանքը կնոջ դիմանկար է:

25 Նոյեմբերի, 23.30 Կուլտուրա

«Հանուն Փիթի»* Ռեժիսոր՝ Փիթեր Յեյթս: Դերերում. Բարբրա Սթրայզենդ, Մայլզ Սառազին: ԱՄՆ, 1974:

Զվարճալի եւ անհավակնոտ կատակերգություն:

25 Նոյեմբերի, 00.30 Դ2

«Եվ քո մորն էլ»* Ռեժիսոր՝ Ալֆոնսո Կուարոն: Դերերում. Գաել Գարսիա Բեռնալ, Մարիբել Վերդու, Դիեգո Լունա: Մեքսիկա, 2001:

Վենետիկի փառատոնի երկու մրցանակին արժանացած պատանեկան դրամա հասունացման մասին:

26 Նոյեմբերի, 00.40 Նոր ալիք

«Մնաս բարով, արու»* Ռեժիսոր՝ Մարկո Ֆերրերի: Դերերում. Ժերար Դեպարդյո, Մարչելլո Մաստրոյաննի, Գեյլ Լորենս, Ջեյմս Կոկո: Իտալիա - Ֆրանսիա, 1977:

Կանանի փառատոնի հատուկ մրցանակը շահած տրագիֆարս մեռնող քաղաքակրթության եւ մարդկային կարգերի փլուզման մասին:

27 Նոյեմբերի, 23.20 Կուլտուրա

«... Եվ արդարադատություն բոլորի համար»* Ռեժիսոր՝ Նորման Ջուիսոն: Դերերում. Ալ Պաչինո, Լի Ստրասբերգ: ԱՄՆ, 1979:

Ազնիվ ու անկաշառ փաստաբանը մաքառում է դատական համակարգի արատների դեմ:

28 Նոյեմբերի, 02.55 1-ին կանալ

«Շինղլերի ցուցակը»* Ռեժիսոր՝ Սթիվն Սպիլբերգ: Դերերում. Լիամ Նիսոն, Բեն Քինգսլի, Ռեյֆ Ֆայնս: ԱՄՆ, 1993:

Գերմանացի ձեռնարկատեր Օսկար Շինդլերը երկրորդ աշխարհամարտի տարիներին 1100 հրեաների է փրկում Օսվենցիմի դիակիզարաններում նրանց սպասվող անխուսափելի մահից: Ֆիլմն արժանացել է 7 «Օսկարի»:

Էջը պատրաստեց ՀԱՎԱՆ, ԲՈՅԱՋՅԱՆԸ

Մեկնարկը տվեց

Երեկ շախմատիստի կենտրոնական տանը տվեց Տիգրան Պետրոսյանի 75-ամյակին նվիրված շախմատի միջազգային մրցաշարի մեկնարկը: Մինչ ժամը 16-ին մրցաշարի մասնակիցները կնստեին խաղասեղանների շուրջ եւ գործի կդնեին շախմատային ժամացույցները, տեղի ունեցավ հուշամրցաշարի բացման հանդիսավոր արարողությունը: Նախ՝ մրցաշարի մասնակիցները, կազմկոմիտեի անդամներն ու պատվավոր հյուրերը, որոնց թվում էին նաեւ ՀՀ պաշտպանության նախարար, շախմատի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսյանը, միջազգային գրոսմայստերներ Սմբատ Լպուտյանը, Վլադիմիր Հակոբյանը ծաղիկներ դրեցին աշխարհի 9-րդ չեմպիոնի հուշարձանին: Ապա մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց Սերժ Սարգսյանը. «Ողջունում եմ բոլորիդ, որ մեծ հետաքրքրություն եք դրսեւորել այս մրցաշարի նկատմամբ: Ինչպես գիտեք, մրցաշարն անցկացվում է հանճարեղ շախմատիստ Տիգրան Պետրոսյանի ծննդյան 75-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակում եւ կազմակերպվել է ՀՀ կառավարության ստեղծած հանձնախմբի եւ շախմատի Հայաստանի ֆեդերացիայի կողմից: Ձեզ եմ փոխանցում նաեւ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի ողջույնները, որի հետ, հուսով եմ, հնարավորություն կունենաք անձամբ հանդիպելու մրցաշարի օրերին: Բոլոր մասնակիցներին հաջողություն եմ ցանկանում, հուսով եմ, որ այս մրցաշարում շատերը բարձր արդյունքներ ցույց

տարեր: Իսկ դա նշանակում է, որ կենտ համարներ ունեցող մասնակիցներն առաջին տուրում խաղալու են սեւ խաղաքարերով:

Մրցաշարին մասնակցում են 8 երկրների (Հայաստան, Վրաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Իրան, Լիտվա, Անգլիա, Ավստրիա) 128 շախմատիստներ, որոնց թվում են 17-ական միջազգային գրոսմայստերներ եւ միջազգային վարպետներ: Մեր ուժեղագույն շախմատիստներից այս մրցաշարում հանդես են գալիս Հայաստանի այս տարվա չեմպիոն Արշաշես Մինասյանը, Գաբրիել Սարգսյանը, Կարեն Ասրյանը, Աշոտ Անաստասյանը, Արա Մինասյանը, Արսեն Եղիազարյանը, Տիգրան Նալբանդյանը, Արման Փաշիկյանը, Տիգրան Քոթանջյանը, Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանը, Նելլի Աղինյանը:

Վասիլի Իվանչուկը հաղթեց Գագիկ Հակոբյանին: Մրցաշարում երկրորդ վարկանիշն ունեցող Պավել Սմիռնովը զիջեց Շոթա Ազալաշեին: Հաղթանակով մեկնարկեցին Կարեն Ասրյանը, Արշաշես Մինասյանը, Աշոտ Անաստասյանը, Արսեն Եղիազարյանը, Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանը: Գաբրիել Սարգսյանը ոչ-ոքի խաղաց Ավետիք Գրիգորյանի հետ: Նելլի Աղինյանը միավորը կիսեց Հայկ Մինասյանի հետ պարտիայում: Այսօր կկայանա մրցաշարի երկրորդ տուրը:

Չիլավերտը հրաժեշտ տվեց մեծ ֆուտբոլին

Պարագվայի հավաքականի հանրահայտ դարպասապահ Խոսե Լուիս Չիլավերտը հրաժեշտ տվեց մեծ ֆուտբոլին: Հրաժեշտի խաղում էլ նա հավասարիմ մնաց ոճբարկուի իր կոչմանը եւ դարձավ գոլի հեղինակ:

Փոքր տարիքում Չիլավերտն էլ մյուսների նման սիրում էր խաղալ հարձակման գծում եւ գոլեր խփել: Սակայն ֆուտբոլի դպրոցում մարզիչները նրան վստահեցին դարպասի պաշտպանությունը: Չնայած դրան, Չիլավերտը մարզումներից հետո մնում էր խաղադաշտում եւ տուգանային հարվածների իրացման տեխնիկան էր հղկում: Նույնիսկ «Սան Լորենսոյում» նա յուրօրինակ մրցման մեջ էր մտել թիմի մարզիչ Վելիբոր Սիլուտինովիչի հետ: Մի քանի տարվա համառ մարզումներից հետո Չիլավերտն արդեն վարպետացել էր տուգանային հարվածների իրացման մեջ, սակայն խաղերի ժամանակ թիմակիցները նրան չէին վստահում տանդարտ դիրքերի իրացում:

Եվ ահա 1989 թ. օգոստոսի 27-ին Պարագվայ-Կոլումբիա հանդիպման վերջին րոպեին 1-1 հաշվի ժամանակ պարագվայցիները 11 մ հարվածի իրավունք են ստանում: Հարվածի իրացումը վստահվում է Չիլավերտին, որն էլ դիպուկ հարվածով հաղթանակ է բերում իր թիմին: Հետաքրքրական է, որ այդ խաղում նա գրավեց Ռենե Իգիտայի դարպասը, որին Չիլավերտն իր կուռքն էր համարում: Դա Չիլավերտի խփած առաջին գնդակն էր: Դրանից հետո հետագա տարիներին նա դարձավ թիմի եւ հավաքականի տուգանային եւ 11 մ հարվածների հիմնական իրացնողը: Ֆուտբոլային իր կենսագրությունում Չիլավերտը խփել է 63 գնդակ, որից 46-ը՝ 11 մ հարվածով: Դրանցից 8-ը (6-ը՝ 11 մ-ով) նա խփել է Պարագվայի հավաքականի կազմում, մեկական՝ «Սարագոսայում» եւ «Ստրասբուրգում» (երկուսն էլ՝ 11 մ-ով), 4-ը՝ (2-ը՝ 11 մ-ով)՝ Ուրուգվայի «Պենյարոլում»: Բոլորից շատ՝ 48 գոլ (35-ը՝ 11 մ-ով) է խփել արգենտինական «Վելես Սարսֆիլդում», մեկ գնդակ էլ իր հրաժեշտի խաղում խփել է «Սերո Պորտենոյում»:

Ֆուտբոլային իր կենսագրությունում անվանի դարպասապահը մեկ անգամ չէ, որ տիտղոսների է արժանացել: 3 անգամ «Վելես Սարսֆիլդի» կազմում նա նվաճել է Արգենտինայի չեմպիոնի տիտղոսը, դարձել է Լիբերտադորեսի գավաթակիր, հաղթող ճանաչվել Միջմայրցամաքային գավաթի խաղարկությունում՝ 1994 թ. շահելով խաղը «Միլանից»: 1998 թ. աշխարհի առաջնությունում, որտեղ Պարագվայի հավաքականը մտավ 1/8 եզրափակիչ եւ միայն լրացուցիչ ժամանակում զիջեց աղագա չեմպիոնին՝ Ֆրանսիայի հավաքականին, Չիլավերտը ճանաչվեց լավագույն դարպասապահ: Ամենայն հավանականությամբ 39-ամյա Չիլավերտը մեծ ֆուտբոլում ելույթներն ավարտելուց հետո կմնա ֆուտբոլում՝ մարզելով կոլումբիական թիմերից մեկը:

Թայսոնի առանձնատունը վաճառվեց աճուրդով

Գերծանր քաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն Մայք Թայսոնի առանձնատներից մեկը 4 մլն դոլարով վաճառվել է աճուրդում: Գնորդը 31-ամյա բրիտանացի միլիոնատեր Դոմինիկ Մարոկոն է, որը բոնցֆամարտի մեծ սիրահար է: «Լինելով բոնցֆամարտի մեծ սիրահար, ես պարզապես պարտավոր էի գնել այդ առանձնատունը, որտեղ բնակվել է բոնցֆամարտի լեգենդ Մայք Թայսոնը: Այդ տան յուրաքանչյուր առարկա իրենից պատմական արժեք է ներկայացնում, քանի որ կապված է Թայսոնի հետ», հայտարարել է Մարոկոն առանձնատունը գնելուց հետո: Սա աճուրդով վաճառված Թայսոնի արդեն 2-րդ առանձնատունն է: Մի քանի ամիս առաջ նրա առանձնատներից մեկը վաճառվել էր 4,5 մլն դոլարով:

Օլիմպիադան Հունաստանին 9 մլրդ դոլար արժեցավ

Հունաստանի ֆինանսների նախարար Յորգոս Ալոգոսկուֆիսը հայտարարել է, որ Աթենքում կայացած ամառային օլիմպիական խաղերի կազմակերպման եւ անցկացման ընդհանուր ծախսերը կազմել են 9 մլրդ դոլար: Երկրի նախորդ կառավարությունը, որը հրաժարական էր տվել օլիմպիական խաղերի մեկնարկից առաջ, գտնում էր, որ խաղերի կազմակերպման եւ անցկացման վրա անհրաժեշտ կլինի ծախսել 4,6 մլրդ դոլար: Ըստ ֆինանսների նախարարի, այդ գերածախսը պայմանավորված է մարզական կառույցների շինարարության ձգձգմամբ եւ խաղերի անվտանգության համար անհրաժեշտ ծախսերի ավելացմամբ: 1997 թ., երբ հաստատվում էր օլիմպիադայի բյուջեն, խաղերի անվտանգության ապահովման համար նախատեսված էր ծախսել 125 մլն դոլար, սակայն սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչությունից հետո որոշվեց լուրջ ուշադրություն դարձնել օլիմպիականների անվտանգությանը: Ուստի 2001 թ. այդ ծախսերը հասցվեցին 1,2 մլրդ դոլարի:

Ռոդիկն էլ մտավ հաջորդ փուլ

Հյուսիսային ընթացող թենիսի աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունում հայտնի դարձավ կիսաեզրափակիչի 2-րդ մասնակիցը: Ամերիկացի Էնդի Ռոդիկը «կապույտ» խմբում իր երկրորդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով ռուսաստանցի Մարատ Սաֆինին (7-6, 7-6): Այս խմբի մյուս խաղում Թիմ Հենմանը առավելության հասավ Գիլյերմո Կորիայի նկատմամբ (6-2, 6-2): Այսպիսով, «կապույտ» խմբում մեկական միավոր ունեն Սաֆինն ու Հենմանը: Հենց նրանց միջեւ կայանալիք մրցախաղն էլ կանվանի կիսաեզրափակիչի երկրորդ մասնակցին: Իսկ «կարմիր» խմբում հաջորդ փուլի ուղեգրի համար միմյանց հետ կմրցեն Հյուիթն ու Գաուդիոն:

Գրիշչուկն առաջ է անցնում

Շախմատի ՌԴ առաջնության 4-րդ տուրից հետո մրցաշարային աղյուսակը 3 միավորով միանձնյա գլխավորեց Ալեքսանդր Գրիշչուկը: Նա 6-ժամյա համառ պայքարից հետո պարտության մատնեց Վիտալի Տեկովսկուն: Աշխարհի նախկին չեմպիոն Գարի Կասպարովը Մոսիլովի հետ պայքարում համառորեն հաղթանակի հասնելու ուղիներ էր փնտրում, սակայն չկարողացավ իրացնել իր առավելությունը եւ 76-րդ քայլին մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին: Տուրի մյուս երեք մրցախաղերն էլ ոչ-ոքի ավարտ ունեցան, սակայն այդ պարտիաներում պայքարը կարճատեւ էր: Միավորը կիսեցին Մորոզեւիչն ու Սվիդլերը, Կորոտիլովն ու Եմիբինը, Դրեեւն ու Բարեւը:

Երեկ մրցաշարում հանգստյան օր էր, իսկ այսօր կկայանա 5-րդ տուրը: Առաջատարից կես միավորով հետ է մնում Դրեեւը: Կասպարովը, Կորոտիլովն ու Տիմոֆեեւը 3 հնարավորից վաստակել են 2-ական միավոր: Նույնքան միավոր ունի նաեւ Եմիբինը, սակայն չորս հնարավորից:

Յորդանեսկուն հրաժարական է տվել

Հայաստանի հավաքականի հետ ընտրական մրցախաղում գրանցված ոչ-ոքի արդյունքը ճակատագրական եղավ Ռումինիայի ընտրանու գլխավոր մարզիչ Անգել Յորդանեսկու համար: Խաղի հաջորդ օրը Յորդանեսկուն հրաժարական է ներկայացրել Ֆուտբոլի Ֆեդերացիա: Ակնհայտ է, որ ընտրական առաջին խմբի հետնապահի հետ խաղում ռումինացիները միմիայն հաղթանակ էին ակնկալում, ուստի ոչ-ոքին նրանց համար հավասարազոր էր ձախողման: Իսկ նման դեպքերում սովորաբար մարզիչները հրաժարական են տալիս:

«Լիվերպուլը» հետաքրքրվում է Մորենտեսով

Մադրիդի «Ռեալի» հարձակվող Ֆեռնանդո Մորենտեսը հնարավոր է տեղափոխվի «Լիվերպուլ»: Ճիշտ է, այս մասին առայժմ ոչ մի տեղեկություն չեն տարածել երկու ակումբները, սակայն «Լիվերպուլի» մարզաբազայի աշխատակիցները Մորենտեսին տեսել են անգլիական ակումբի ղեկավարների հետ բանակցելիս:

Անգլիայի ամենատիտղոսակիր թիմը վերջին շրջանում կազմի հետ կապված լուրջ դժվարությունների է հանդիպել: Լուրջ վնասվածքի պատճառով գրեթե մինչեւ մրցաշրջանի ավարտը խաղադաշտ դուրս չի գա ֆրանսիացի հարձակվող Թիերրի Հենրին: Օրերս էլ մակեդոնացիների հետ խաղում վնասվածք ստացավ «Լիվերպուլի» մյուս առաջատար հարձակվողը՝ չեխ Միլան Բարոշը: Նա արդեն 17-րդ րոպեին ստիպված էր թողնել խաղադաշտը: Բժիշկների հավաստմամբ, Բարոշը նվազագույնը մեկ ամիս խաղադաշտ դուրս չի գա:

Այսպիսով, մինչեւ ձմռան տրանսֆերային շրջանի սկսվելը, «Լիվերպուլի» կազմում մնացել են ընդամենը երկու հարձակվողներ՝ Ֆլորիան Սինամա-Պոնյոլը եւ Նիլ Մելորը: Հետաքրքրական է, որ «Լիվերպուլի» ու «Չելսիի» միջեւ նախնական համաձայնություն էր ձեռք բերվել Մելորին վարձավճարով «Չելսիին» տրամադրելու վերաբերյալ: Սակայն Բարոշի վնասվածքից հետո այդ գործարքը չեղյալ է համարվել:

Ադրիանոն որակազրկվել է 2 խաղով

Միլանի «Ինտերի» բրազիլացի հարձակվող Ադրիանոն ՈՒԵՖԱ-ի կարգապահական կոմիտեի որոշմամբ որակազրկվել է 2 խաղով: Ինչպես տեղեկացրել էին, «Վալենսիայի» հետ չեմպիոնների լիգայի մրցաշարի խաղում Ադրիանոն բռունցքներով հարվածել էր Մարկո Կանյեոյին: Այսպիսով, Ադրիանոն չի մասնակցի «Ինտերի» մասնակցությամբ չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի ավարտական 2 հանդիպումներին: «Ինտերը» ստիպված կլինի նոյեմբերի 24-ին «Վերդերի» եւ դեկտեմբերի 7-ին «Անդերլեխտի» հետ հանդիպումները անցկացնել առանց Ադրիանոյի:

«Սպիտակ առյուծին» չներեցին

Գերմանիայի հավաքականից ընկերական մրցախաղում խոշոր հաշվով (0-3) պարտվելուց հետո Կամերունի ընտրանու գլխավոր մարզիչ, գերմանացի մասնագետ Վինֆրեդ Շեֆերը հեռացվել է իր պաշտոնից: «Սպիտակ առյուծին» աշխատանքից անձամբ է հեռացրել երկրի սպորտի նախարար Զիգֆրիդ Դավիթ Էտամե Մասոնան:

Պաշտոնանկության պաշտոնական պատճառը հավաքականի ցույց տված ցածր արդյունքներն են: Սակայն կարծիք կա, որ ֆուտբոլային չինովնիկները վաղուց էին համար առիթ փնտրում Շեֆերին պաշտոնանկ անելու համար: Եվ ահա, առիթը ներկայացել էր: Գերմանացի մասնագետը Կամերունի հավաքականը գլխավորում էր 3 տարի: Այդ ընթացքում կամերունցիները 2002 թ. Աֆրիկայի գավաթի խաղարկությունում հաղթող էին ճանաչվել եւ իրավունք էին ստացել մասնակցելու ֆուտբոլի աշխարհի վերջին առաջնությանը:

Կրկին դոպինգ ֆուտբոլում

Լյու Ցզյանշենը չինացի առաջին ֆուտբոլիստն է, որի դոպինգ-ստուգումը դրական արդյունք է տվել: 32-ամյա ֆուտբոլիստից անալիզներ էին վերցրել սեպտեմբերի 26-ին, առաջնության 12-րդ տուրի հանդիպումից հետո: Ճիշտ է, նա հերքում է արգելված խթանիչներ օգտագործելու փաստը, նշելով, որ թոքաբորբի դեմ դեղեր է ընդունել: Սակայն Չինաստանի ազգային օլիմպիական կոմիտեի հակադոպինգային հանձնաժողովն այդ բացատրությունն անհիմն է համարել: Հատկանշական է, որ չին ֆուտբոլիստն այդ դեպքից հետո հեռացել է ակումբից եւ նրա գտնվելու վայրն անհայտ է:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Առաջին շաբաթվանն արդեն պատպարում է Երևանի փողոցի շների

Տարիներ շարունակ քաղաքի թափառող կենդանիների հարցի լուծման տարբեր առաջարկներ եւ դրա նկատմամբ տարբեր վերաբերմունքներ են եղել: Առայժմ Երեւանում իրականացվում է շնային սպանդի մեթոդը, եւ քաղաքի բնակիչները բազմիցս են ականատես կամ ականջալուր եղել վայրագ տեսարանների ու սպանվող կենդանիների աղեխուր կաղկանձների: Երեւույթը զուտ բարոյականության ու հումանիզմի շրջանակներից դուրս նաեւ կենսաբանորեն եւ էկոլոգիապես անբարենպաստ է: Նախ՝ կենդանիների արհեստական ոչնչացումը առաջացնում է ծնելիության բարձր աճ, իսկ բնական հավասարակշռության խախտումից շների պակասելուն զուգահեռ նկատվում է առնետների բազմացում, որոնք վարակների տարածման տեսակետից մեծ վտանգ են ներկայացնում, իսկ շներն առնետների դեմ միակ պայքարող կենդանիներն են:

Եվրոպական երկրներում այդ հարցին քաղաքակիրթ լուծում վաղուց արդեն տվել է՝ շնապասարանների ու բուծարանների գոյությամբ եւ համապատասխան ծառայություններով:

Տարիների սոցիալական փորձությունները մեր մեջ զարգացրին մարդակենտրոն էգոիզմը եւ ինքնապաշտպանության բնազդից սկսեցին ոչնչացնել մեր բնահարստությունները՝ նախ ցրից, ապա շահի մոլուցքից դրդված, մոռանալով, որ բնաշխարհը, որքան էլ մարդու իշխանության տակ, բայց դիմադարձելու հնարավորություններ ունի: Բարեբախտորեն, մեզանում հայտնվեցին բնապահպանական («Կանայների միություն», «Հայաստանի անտառներ», «Հանուն մարդկային կայուն զարգացման» եւ այլն) հասարակական կազմակերպություններ, որոնք փորձում են տեր կանգնել բնության հետ մարդու ներդաշնակ ապրելու եւ խղճի օրենքներին:

Մեր թերթը բազմիցս անդրադարձել է քաղաքի թափառող շների լուծման խնդրին իր հսկակ վերաբերմունքով. փողոցի մեր բնակիչներն ունեն հոգատարության կարիք, եւ քաղաքն էլ որոշակիորեն ունի նրանց անհրաժեշտությունը:

Շատ քաղաքացիներ, հասարակական կազմակերպություններ ու անհատներ բազմիցս իրենց բողոքն են արտահայտել քաղաքային իշխանություններին, նաեւ մեր խմբագրությանը՝ շների գիշերային սպանդը դադարեցնելու խնդրանքով: Այսօր արդեն քաղաքային իշխանությունները (հաշվի առնելով Հայաստանի՝ Եվրոմիությանն անդամակցելու պայմանները) եւ փնտրում են խնդրի քաղաքակիրթ լուծման եղանակներ:

Տեղեկանալով Երեւանի Էրեբունի համայնքում Արին Բերդ փողոցի վրա կառուցվող շնաբուծարանի մասին, այցելեցինք՝ տեղում ծանոթանալու կատարվող աշխատանքներին: Կենդանիների պաշտպանության «SOS» հասարակական կազմակերպությունը սեփական միջոցներով ձեռնամուխ է եղել շնաբուծարանի ստեղծմանը՝ տարածքում վերակառուցելով երկհարկանի շինություն, որ գործնականորեն նպաստելու է փողոցներում շների սպանդի դադարեցմանը: Մեր այցելության ժամանակ շուրջ 50 շնիկներ ապաստանել էին շնաբուծարանում: Այստեղ նրանց կերակրում ու խնամում էին այնպես, որ շներից շատերը շրջակայքում պտտվելուց հետո վերադառնում էին իրենց ապահով վիճակին՝ փողոցային կյանքը մոռացած: Շնաբուծարանը բաղկացած է երկու հարկանի շինություն, որ գործնականորեն նպաստելու է փողոցներում շների սպանդի դադարեցմանը:

Ստեղծվելիք պայմանները (կառանցինային, վիրահատական, հետվիրահատական բաժանմունքներ, խոհանոցային, ադմինիստրատիվ մասեր եւ այլն) հնարավորություն են տալու օրական ընդունելու եւ սպասարկելու 20-25 կենդանու:

Ցանկացողներն այստեղից կարող են նաեւ շներ վերցնել, սակայն որոշակիորեն ապահովելու պայմաններով: Օրինակ, մերժվել է մութ ավտոնկակում շանը պահել ցանկացող մի քաղաքացի:

Մեր զրույցի ընթացքում «SOS» հասարակական կազմակերպության նախագահ Նունե Մեհրաբյանը հավաստիացրեց, որ 15-20 օրից կավարտվեն շինարարական աշխատանքները, որից հետո, քաղաքապետարանի հետ կնքվելիք պայմանագրի համաձայն, քաղաքի տարեկան բյուջեից որոշակի հատկացումներ կկատարվեն բժիշկների աշխատավարձի, դեղորայքի եւ կերի համար, որը կարող է բավարարել ծախսերի 40-50 տոկոսը: «Ցավ եմ ապրում, առանց որեւէ հովանավորի մենք կառուցեցինք այս ամենը, ծանր էր, բայց կարողացանք ստեղծել: Համոզված եմ, որ աջակցություն լինելու է, 30-40 տարի քաղաքակիրթ երկրներում ստերիլացիա է գործում, ոչ թե սպանություն:

Որեւէ հատուկ բան չեմ ուզում վերագրել ինձ, կարծում եմ, որ յուրաքանչյուր նորմալ մարդ այսպես պիտի մտածի: Ուզում եմ մեր բնակչությանը դիմել խնդրանքով, որ մի փոքր մեծահոգություն հանդես բերեն եւ ամեն շան հաչոց որպես ահազանգ չընկալեն: Ես զրուցել եմ 7-8 անասնաբույժի հետ, նրանք հավաստիացնում են, որ Երեւանում շների կատաղության երեւույթ չկա: Փորձենք, եթե հնարավոր է սիրել մեր բարեկամներին, որոնց երբ գազանաբար սպանում են, խղճահարություն է մեջս առաջանում, երբ նրանց գցում են պարկերը եւ երբեմն էլ փամփուշտն են խնայում, կենդանի-կենդանի թաղում, հետո այդ փամփուշտը վաճառում են...»:

Բարեսիրական մղումներից այս գործողությունները ծավալող կազմակերպությունը եկամուտ ու շահույթ հետապնդելու հավակնություն չունի, գտնում է, որ միայն իրենց միջոցները բավարար չեն եւ նման այլ ընկերությունների առկայությամբ խնդրին ավելի արդյունավետ լուծումներ կտրվեն:

Երբ հեռանում էինք տարածքից անխնամ ու փոշոտ ճանապարհով, առաջին շնաբուծարանի գոյությունը, գթասրտության եւ խղճի դեռեւս չմարելու այս դրսեւորումը հույս ներշնչեց, թե ամեն ինչ կորած չէ, որովհետեւ, այնուամենայնիվ, քաղաքակրթությունը սկսվում է բարեպաշտական եւ մարդասիրական զգացումներից:

ՄԵԼՐԱՅԻ ԲԱՂԱԼՅԱՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Ժամը 19-ից հետո ինչո՞ւ են չխանում միկրոավտոբուսները

Ըստ դիսպետչերական տվյալների, մի բան էլ ավելի է լինում դրանց խնամքը

Երեւանցիների փոխադրման արդեն երկար ժամանակ անլուծելի խնդիրներն առավել սրվում են երեկոյան ժամը 7-ից հետո: Այդ ժամերին նախանձելի համառությամբ մեկը մյուսի հետեւից երթուղիներից անհետանում են միկրոավտոբուսները: Խոսքն անկասկած բոլորին չի վերաբերում, բայց թիվ 91-ով փոխադրվողների ցավը միայն իրենք գիտեն:

Հանգամանքների բերումով երեկ երեկոյան կանգառում հայտնվեցի ժամը 21-ի մոտերը: Մտադրվելով փորձել «հետազոտություն» կատարել, ավելի քան ժամ ու կես համառորեն սպասեցի, բառացիորեն ոչ մի մեքենա չհայտնվեց, ոչ թիվ 91-ը, ոչ էլ նույն երթուղին սպասարկող թիվ 26 ավտոբուսը:

Հաջորդ առավոտյան քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետ Տիգրան Ղազարյանին խնդրեցի տրամադրել թիվ 91-ը սպասարկող տնտեսվարող սուբյեկտի վերաբերյալ դիսպետչերական ծառայությունից նախորդ օրն ստացված տվյալները: Համաձայն այդ տեղեկատվության, երեկոյան ժամը 21-ին երթուղի էր դուրս եկել 20-ի փոխարեն 23 միկրոավտոբուս, այսինքն մի բան էլ ավելի:

Պարոն Ղազարյանին խնդրեցի բացատրել այդ տարօրինակ «ցուցանիշները»: Ի վերջո, ինքս անձամբ ականատես էի եղել, որ ոչ մի մեքենա այդ ժամին չի եղել երթուղում: Նա խոստացավ օրվա ընթացքում պարզաբանել հակասությունը, բայց մինչեւ օրվա վերջ այդպես էլ չհաջողվեց կրկին կապվել նրա հետ:

Տվյալ դեպքում տարօրինակն այն է, որ յուրաքանչյուր երթից հետո երթուղային վարորդը պարտավոր է որոշակի գումար մուծել, եւ հենց այնպես թվեր գրանցելը չի տեղավորվում որեւէ տրամաբանության մեջ:

Մեր թերթը հաճախ է անդրադառնում ներքաղաքային տրանսպորտի աղետալի վիճակին: Սովորաբար մեզ «անլուծելի» խնդիրների մի ամբողջ կույտ են ներկայացնում, հավատացնելով, որ քաղաքապետարանն ամեն ինչ անում է քաղաքն այս վիճակից հանելու համար: Սակայն դատելով ամեն ինչից, գոնե լուծելի խնդիրների համար մաս չեն շարժում այստեղ: Եթե մի 2 օր պաշտոնյաներն իրենք հայտնվեին կանգառներում, գուցե այդպես անտեղյակ չլինեին փոխադրումների իրական վիճակին: Գոնե նվազագույն հսկողություն կարելի էր անել:

Գծի տերը, իմա՝ տնտեսվարող սուբյեկտները, անունը փոխելուց հետո, բովանդակությունը չեն փոխել: Նրանք գործում են միայն հանուն շահույթի, ոտնահարելով ու արհամարհելով հասարակ պարզորի շահերը:

Կ. Դ.

Մետրոյի ուղեվարձը չի՞ թանկանա

11,5 կմ երկարությամբ եւ 10 կայարան ունեցող Երեւանի մետրոպոլիտենից օրական օգտվում է շուրջ 60.000 ուղեւոր, որը կազմում է քաղաքային ուղեւորափոխադրումների 5 տոկոսը: Մետրոպոլիտենի տնօրենի առաջին տեղակալ Փայլակ Յայլոյանի հավաստմամբ, նկատվում է ուղեւորափոխադրումների աճ: «2 տարի առաջ օրվա ընթացքում առավելագույնը պարտադրում էինք 40.000 ուղեւորի: Աճը նկատվեց տրամվայների գործունեությունը դադարեցնելուց հետո», ասում է Փայլակ Յայլոյանը:

Թեպետ մետրոպոլիտենը համարվում է վնասով աշխատող կառույց, այնուհանդերձ առանց այդ միջոցի անհնար է զարգացող քաղաքներում, հետեւաբար նաեւ Երեւանում ապահովել բնականոն ուղեւորափոխադրումներ: Ուղեւորներից շատերը նշում են, որ մետրոն տրանսպորտի այլ միջոցներից տարբերվում է հարմարավետությամբ, արագությամբ եւ, որ կարեւորն է, երկար սպասել չի տալիս: Մետրոպոլիտենի տոմսը 50 դրամ է: Քաղաքապետի վերջին հայտարարությունից հետո, թե ապագայում հնարավոր է ավտոբուսների ուղեվարձի թանկացում, մետրոպոլիտենի մշտական ուղեւորներից շատերը մտահոգություն հայտնեցին, թե արդյոք հնարավո՞ր է նաեւ մետրոպոլիտենի ուղեվարձի թանկացում: Քաղաքապետարանից տեղեկացրին, որ մետրոյի տոմսերի արժեքը չի բարձրանա եւ նման հարց չի էլ քննարկվել: Մետրոպոլիտենի ղեկավարության առաջնային խնդիրն այսօր կառույցի վերազինումն է, որի համար անհրաժեշտ են լուրջ ֆինանսական ներդրումներ: Վագոնները եւ կարի ու հեռակառավարման համակարգերը 25 տարվա հնության են: Սակայն մետրոպոլիտենի բյուջեն բավարարում է միայն անվտանգության միջոցառումներն իրականացնելու համար: 2004 թ. մետրոպոլիտենի բյուջեն կազմել է 1,5 մլրդ դրամ, որից 805 մլն դրամը՝ ուղեւորափոխադրումներից, տարածքի վարձակալումից եւ գովազդից, իսկ մնացած մասը տրամադրել է պետությունը՝ դոտացիայի տեսքով: 1999 թ. մետրոպոլիտենը կարի եւ տրանսպորտի նախարարությունից անցավ քաղաքապետարանի ենթակայությանը՝ տրանսպորտային միասնական համակարգ ստեղծելու նպատակով:

ԱՐԵՎԻԿ ԲԱՂԱԼՅԱՆ

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA
LOG ON TO
www.azg.am
IN ARMENIAN, RUSSIAN, ENGLISH AND TURKISH

Հայաստանի ամերիկյան համալսարանը

մրցութային կարգով *աշխատանքի է հրավիրում*

▪ էլեկտրիկի

Թեկնածուն պետք է ունենա մասնագիտական կրթություն եւ առնվազն երկու տարվա համապատասխան աշխատանքային փորձ:

Պահանջվող փաստաթղթերն են՝ ինքնակենսագրական, կրթության եւ տեխնիկայի անվտանգ շահագործման գիտելիքների ստուգման վկայականներ: Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ նոյեմբերի 23-ը, ժ. 17:45-ը:

Դիմել ՀԱՀ-ի կադրերի բաժին, հետեւյալ հասցեով՝ Մարշալ Բաղրամյան 40 պող., 50ա սենյակ:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-63

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրած է տպագրության՝ 19.11.2004 Գինը՝ 100 դրամ